

18812

Uppnäs kyrkyhus

891.99

h-17

1893

891.99


Փ-17

№ 2. Հրատարակութիւն «Ասք-Աւե» Ի № 2.

Ա.Զ.ԲԱՆԱԶ—ՓԱՄԲԱԿԵՑԻ

ՄԻՐՈՅ ՊՕԷԶԻԱ

ՆՄԱՆՈՂՈՒԹԻՒՆ



213

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ «ՄԻՐ» Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

1893

Հրատարակումը ըստ Գրքահանրագրության
հրատարակման օրենքի
№ 2. Հրատարակություն «Աստ-Արտ»-ի № 2.

891.99

41-17

ԱՍՏՆԱԶ — ՓԱՍՏՐԱԿԵՑԻ

18 259
70
P.P.P.

ԱՐԻՈՅ ՊՕԷԶԻԱ

ՆԱԽԳԻՐ

Հրատարակումը ըստ Գրքահանրագրության
հրատարակման օրենքի
№ 2. Հրատարակություն «Աստ-Արտ»-ի № 2.

←:→

2003

Ք Ի Յ Լ Ի Ս

ՏԳՈՒՄ «ԱՐՈՐ» Տ. ՆԱԳՈՒՆՆԵՐ

1893

200

1001
4365

4336

Ի ր մ տ ե ռ ի մ ը ն կ ե ր

Հ Ա Յ Կ Մ Ո Ւ Բ Ա Չ Ե Ա Ն Յ Ի Ն

Հ ն կ ե տ ր ա կ աս ն ա ն կ ե լ ծ ս ի ր ո յ

Ն Ի Ի Բ Ո Ի Մ Է

Փ Ա Մ Բ Ա Ա ի ճ Թ Ի Կ

Дозв. Ценз. Тифлясь, 26-го Октября, 1892 г.
Тип. „АРОР“, Т. Я. Назарьянъ, Баятин. ул.



Մ Ի Ր Ո Յ Պ Օ Է Չ Ի Ա

I.

—Ո՛չ, սիրելիս, երկար ապրել այսպիսի պայմաններում, ճշմարիտ, ես չեմ կարող,—ասում էր տիկին Մարգարիտա Յովսէփեանը, որ մի միջին հասակի ջահէլ, պարարտ, լայնաթիկունք կին էր, և որը դիմեց Օհան Օհանեանին, ամէնայն քնքշութեամբ նայելով ուղղակի նրա աչերի մէջ՝ ասաց.—Դ՛ն՛ միայն լաւ մտածիր այն գրութեան մասին, որի մէջ գրտնւում եմ ես և դու ինքդ կըհասկանաս, որ պահանջում ես ինձնից անհնարին բան։ Այդ երկդիմութիւնը, այդ յաւիտենական ստուգութիւնը, որին ես պէտք է մօտենամ՝ ճնշում է ինձ չարաչար։ Խաբել մարդուս, կեղծութեամբ վերաբերել նրան իւրաքանչիւր քայլափոխում, օգտւելով նրա հաւատարմութիւնից և մինչև անգամ յարգանքից... ո՛չ ո՛չ... այդ սարսափելի է... Դեռահաս, թխահար կինը վերկացաւ գահաւորակի վրայից և սկսեց արագ-արագ ման գալ իր սենեակում՝ աշխատելով յողթել իր հոգեկան լուղմունքներին, որոնք տիրապետում էին սևաչեայ կնոջ մտքերին, այն անընտանան դերի առթիւ, որը մի քանի ամիս էր ինչչա-

րունակ խաղում էր նա: Օհանեանը նստած էր՝ չըփոփոխելով իր դիրքը, և միայն նրա փայլուն ու խորասուզ աչքերը ջերմօրէն հետևում էին Մարգարիտայի գրաւիչ դէմքին, նրա բոլոր կրակոտ շարժումներին:

— Ի՞նչ ես ցանկանում դու, Մարգօ, քնչ վրձուեցիր, վերջապէս հարցրեց նորա պաշտելին:

— Ի՞նչ վճռեցի ես, միթէ այդ դու չըգիտես, գարմանքով կրկնեց տիկին Յովսէփեանը, կանգնելով ուղղակի Օհանեանի հանդէպ:— Ո՛հ, Աստուած իմ, չէ որ հարիւր անգամ դրականապէս ասել եմ քեզ, որ անհրաժեշտ է ամէն ինչ, այո՛, ամէն ինչ պարզել նրան՝ իմ ամուսնուն, իմ անհոգ, ծոյլ ու դանդաղ ամուսնուն: Հարկաւոր է, որ նա գիտենայ որպէս զի չըխաղայ խաբւած ամուսնու դեր, որին կարող է ծաղրել ամէն մի մարդ, որի մէջ չկայ ծուլութիւն կոչւած բանը: Ի՛նչ միշտ խնդրում ես ինձ, Օնիկ ջան, համբերել, յենւելով մի ինչ որ դադանի իրի վրայ, քեզ միայն յայտնի պատճառներով... Սակայն այդպէս այլ ևս ես չեմ կարող ապրել և համբերել, ես պէտք է ամէն ինչ ասեմ ամուսնուս, ամէն ինչ պարզաբանեմ...

— Ե՛հ, լաւ, Մարգօ, ենթադրենք, որ դու կասես նրան յայտնի փաստերը, իսկ յետոյ քնչ:

— Ի՞նչպէս թէ քնչ. ես բոլորովին չեմ հասկանում, Օնիկ, թէ ինչ ես կամենում դու գորտնով հասկացնել:

— Սակայն հասկանալ այդ ամենեւին դժուարին չէ, ուսերը թափ տալով ասաց երիտասարդ պարոնը, — բայց եթէ դու ցանկանում ես, կըբացատրեմ քեզ իմ միտքը: Նախ՝ այն տեղեկութիւնը, որը այդպէս շտապում, ճգնում ես հաղորդել ամուսնուդ՝ երկար չի պատկանի գոհացուցիչ իրերի թւին, և, իմ կարծիքով, աւելի մարդասիրօրէն է և մինչև անգամ ազնուութիւն է ծածկել մարդուց այնպիսի փաստերը, անցքերը, քան թէ գալ նորա մօտ և ասել. «Ես քեզ դիմանալ չեմ կարող, սիրում եմ ուրիշին», այդ բոլորը նորաձևութիւն է:

Սյնուամենայնիւ, գործիր այնպէս, որպէս զիտես ինքդ, ես խորհուրդ տալու և համոզելու չունիմ ոչ մի իրաւունք:

— Ինչո՞ւ ես այդպէս վիրաւորական կերպով խօսում, Օնիկ:

— Միթէ ես վիրաւորում եմ քեզ իմ մտադրութիւններով:

— Միթէ այդ այն չէ, որ պէտք է, որ հարկաւոր է անել: Եթէ դու ամուսնացած լինէիր և սիրէիր մի ուրիշին, միթէ դու ինքդ քեզ պարտականութիւն չէիր համարիլ ասել այդ նրան՝ քո կնոջը, պարզել նրա առջև քո սիրտը, մանաւանդ եթէ դու տեսնէիր, որ նա սիրում է քեզ իր բոլոր սրտով, հաւատում է քեզ անպայման... Վերջինս տիկինը արտասանեց գլուխը քարշ ձգած և զգաց թէ՛ ինչպէս ամօթխածութեան վարդերը ծածկեցին իր թու-

Թուշիկ այտերը. նա լիջեց ակամայօրէն այդ առաւօտեան տեսարանը, երբ ամուսինը խօսակցելով իրեն հետ, արտայայտեց իր ջերմ և բարի ցանկութիւնը՝ շատ բաների վերաբերմամբ՝ այնպիսի աննկարագրելի յարգանքով և հաւատով գովաբանեց կնոջ ձգտումը, եռանդը դէպի սովորելը, դէպի գրականութիւնը, որ ամէն օր շտապում էր դէպ գիտութեան տաճարը.., սակայն նա փոխարէն զիտութեան սեղանի, նստած էր Օհանեանի սենեակում, անձնատուր էր լինում նորա սիրակէզ փաղաքշանքներին, չափենում էր փոխադարձ սիրոյ խանդավառ երջանկութեամբ՝ խաբելով իրեն համար բարի ազնիւ ամուսնուն..

— Երբէք չէի ասիլ, բացականչեց Օհանեանը վճռողական ձայնով: Եւ ինչո՞ւ համար, կնոջս հետ կապուած եմ անխղելի, ամուր հանգօյցներով, մեզնից կառաջանան որդիք, վերջապէս, չէ որ կայմի յայտնի հասարակական դրութիւն, որին քարուքանդ անելը, ուղղակի անհնարին բան է:

— Մտածիր, Մարգօ, ամէն բան ասելով ամուսնուդ՝ դու պետք է բաժանուիս նրանից, հեռանաս նրա տնից... Ես չեմ խօսում այն բանի մասին, թէ որպիսի ուժգին հարուած կը հասցնես ամուսնուդ ծառայական և հասարակական դրութեանը և թէ ինչ տեսակ խայտառակութեան մէջ կը ձգես նրան: Նրա տարիքում, որ համարեան քսանով աւելի մեծ է քեզնից, շատ հեշտ չէ բժշկել մարդու վերքերը... Նա

ստիպւած կըլինի թողնել իր պարտպանները, փրջացնել իր ամբողջ կարերիսն, հեռանալ մի որ և իցէ հեռաւոր գաւառ, ուր նրան ո՛չ ոք չի ճանաչիլ և կըսկսէ նորից ձգձգել ծառայական նոր որոնած լուծը... Սակայն ես էլի կըլինում եմ, ես չեմ խօսում արդէն այն մասին, թէ նրա կեանքը վերջնականապէս կըլինի կիսամեռ... Իսկ դ՞ու թէ՞ ես մտադիր անել ինքզ քեզ համար: Միայնակ, առանց ապահով դրութեան, առանց մի որ է ապագայի... բոլոր ծանօթներդ և բարեկամներդ երես կը դարձնեն քեզնից, ո՛չ ոք չի ընդունիլ քեզ, ո՛չ ոք չի նայիլ քո երեսին... Եւ դու ձգտում ես դորան:

— Ահ, Աստուած իմ, որպիսի մռայլ տեսարան ես ներկայացնում գու ինձ, Օնիկ, — հառաչեց անբաղդ տիկինը, նստելով գահաւորակի մօտիկ՝ բազկաթոռի վրայ, — միայն ես գիտեմ և ճանաչում եմ հարիւրուոր կանանց, որոնք հեռացան իրենց մարդկանցից, տակն ու վրայ արեցին իրենց ապահոված հասարակական դրութիւնը և ապրում են քաղաքական ամուսնութեամբ աւելի հիանալի կերպով և որոնց խնամատարները սիրում են և յարգում, որպէս վայել է օրինաւոր կնոջը... մի քանիսը նրանցից, մինչև անգամ ներկայումս, ունեն որդիք և... միանգամայն բաղբաւոր են...

— Բաւական է, սիրելիս, այդ բոլորը միմիայն կեղծ հրապուրանքներ են և հարցի միմիայն երեսը... Նայիր մօտիկ, մտիր այդպիսի ընտանիքը

և դու կրտսենես այնտեղ սաածներս՝ տանջանք հոգեկան ցաւերի, կըլսես սրտակոտոր հառաջանքներ: Օրէնքով մեզանում չըկայ քաղաքական ամուսնութիւն, և որդիքը այդպիսի զոյգերի—այօրինի, անիրաւունք արարածներ են: Մթթէ դու մտածում ես, թէ լաւ, ազնիւ կինը կարող է լիապէս զուարճանալ կեանքով, եթէ նա գիտէ, որ իւր որդիքը, այդ անմեղ, խղճալի երեխաները, պէտք է կրեն իրենց վրայ բոլոր ծանրութիւնը մայրական մեղքերի, քաւեն իրենց կեանքով նորանց անցկացրած զմայլական ըստէները:

Չէ որ այդպիսի երեխաները չունին անուն, չունին ազգայ... հազիւ մտնելով դպրոց, հասարակութեան մէջ, նրանք միայն դառնում են ծաղրածութեան առարկայ: Եւ վերջապէս դրութիւնը հէնց այդ մօրը «այդ քաղաքական կնոջ» մթթէ սարսափելի չէ: Նա—իւր ամուսնու ձեռքում խաղալիք է, այսօր նրա մէջ կառաջանալ ֆանտազիայ՝ սիրահարել մի ուրիշի վրայ և թողնել նրան՝ առաջինին ի միասին իր այօրինի երեխաներով—և նա, այդ «քաղաքական կինը» կըմնալ սոված ու ծարաւ: Ես չեմ խօսալ, չեմ խօսալ այն անպիտանների մասին, որոնք շատ թեթեւ կերպով են նայում իրենց պարտականութիւնների վրայ՝ դէպի թոյլ կինը, —շարունակեց Օհանեանը, գգացելով և լուրջ նայելով Մարգարիտայի դալկացած դէմքին,—բայց մինչև անգամ, բարի ազնիւ մարդն էլ անզօր է

դառնում կռուի մէջ հասարակութեան հետ: Գն գիտես, Մարգօ, որ ես սիրում եմ քեզ այնպիսի բուռն սիրով, որ երբէք, այն, երբէք չեմ սիրած ոչ ոքին իմ ամբողջ կեանքում, սակայն երբ դու բաժանուես ամուսնուցդ—և ես չեմ կարող լինել քեզ պաշտպան և խնամատար, չեմ կարող լինել պատնէշ քո և կեանքի դատարկութեան մէջ:

—Չես կարող... շշնջաց Մարգարիտան—այսինքն՝ չես կամենում... Գու, երեւի, մտածում ես, թէ՛ ես կըդառնամ քեզ համար ծանրութիւն, և թէ՛ կըսկսեմ ապրել քո նիւթական միջոցներով... ո՛հ ինչպէս չարաչար սխալում ես,—աւելացրեց նա դողդոջիւն ձայնով,—ես քո մէջ որոնում եմ բարեկամութիւն, օգնութիւն և նեցուկ կեանքի սև և դրժբաղդ օրերում, մօսալ անյոյս վայրկեաններում, իսկ ապրել նիւթապէս, ես ինքս էլ կարող եմ... Հէնց հիմի էլ, ապրելով մարդու հետ, նա ինձ ոչնչով չէ պարտաւորացնում, ինքս բաւականին աշխատանք ունիմ և շահում եմ իմ պատկառելի գումարով:

Գն գիտես, որ ես ինքս ապահոված դրութեան մէջ եմ, և հետևապէս, երբէք չեմ էլ կարող թոյլ տալ ինձ ծանրաբեռնել իմ սիրեցեալ մարդուն, նստել նրա պարանոցին և մեծացնել նրա համար՝ ծանրութեան կշիռը: Ես շատ լաւ եմ հասկանում միատեղ կեանքը, թէ ջանք է հարկաւոր փոխադարձ թեթեւացնել միմեանց գոյութիւնը, որպէս վայելէ երկու, միմեանցից փոխադարձ սիրւած, յարգւած

արարածների, սակայն առանց մի որևէ յետին մտքերի, առանց մի որևէ դրամական հաշիւների: Եւ բացի դրանից, քո կարծիքը թէ՛ ազնիւ կինը չէ կարող բաղդաւոր լինել, գիտենալով, որ այդ բաղդաւորութիւնը գնւած է մի ուրիշի վշտով, անիրաւացի և ծանր սպառաշուքով, հէնց նորա հարազատ որդոց-միանգամայն իրաւացի է ու գորա դէմ հակառակելու չեմ կարող... Ինձ միայն զարմացնում է մի բան. ինչո՞ւ համար դու, խորը թափանցելով սպառաշուք սպորինի ընտանիքի գրութեան մէջ, այդպէս խորը հասկանալով կնոջ չարչարանքը, որը հրաժարուել է գոյութիւն ունեցող օրինաւոր կնոջ գրութիւնից՝ բոլորովին չես ուզում ճանաչել, հասկանալ և ըմբռնել նորա չարչարանքը, նորա նըշաւակութիւնը, նրա արհամարհանքը դէպի իր անձը, երբ նա, սիրելով մի ուրիշին մնում է կին իւր ամուսնուն, վճռում է մտցնել իր ընտանիքի մէջ, այդ «օրինաւոր ընտանիքի» ստախօսութիւն և խաբէբայութիւն... Միթէ դու չես հասկանում, չես ուզում հասկանալ թէ՛ ինչպէս այդ ծանր է, անտանելի է՝ իւրաքանչիւր վայրկեանում ստախօսել, դիմակաւորուել և կարմրել ամուսնու առաջև, մանաւանդ այնպիսիսի, որպիսին է իմ ջրատար ամուսինը: Ա՛յ, ես չեմ կարող տանել այդպիսի մի կեանք, չէ, այդ վեր է իմ կանացի ուժերից, և ինձ զարմացնում է այն, թէ՛ ինչպէս դու, որ ճշմարտասէր և ազնիւ մարդ ես դու,

որ քեզ թող չէիր տալիս անգամ դատարկ սուտ ասելու, այստեղ ո՛չ միայն քաջալերում ես ինձ, բայց և՛ պահանջում ես խայտառակ ստախօսութիւն, գիտակցորէն մղում ես ինձ դէպ խաբէութիւն և պահանջում ես նաև ուխտադրուժ եւ անհաւատարիմ լինել դէպ իմ դերդաստանը, և այն էլ աններելի կերպով: Դ՛ու գուցէ վախեննում ես...

— Ա՛յ, սպասիր, Մարգօ, մի եզրակացնիր իմ խօսակցութիւնից ո՛չ մի վերաւորական խօսք դէպի քեզ, այլ աւելի լաւ է իսկութեամբ ըմբռնիր ասածներս: Դու գիտես, — շարունակեց նա, թէքուելով մատաղ կնոջ կողմը, առնելով նորա ձիւնանման, թոթիլի ձեռիկները իւր արմիքի մէջ, — Ես ունեմ ծեր մայր և քույր, վերջինս բաւական մեծ է ինձնից: Նոքա սպրում են մեր քաղաքի մի լեռ ընկած, խուլ ու կեղտոտ փողոցներից մինում, այն սուղ միջոցներով, որը ես հազիւ հազ կարողանում եմ հայթայթել նոցա: Երբ ես զեռ երեխայ էի, իսկ լեռոյ աշակերտ և մինչև անգամ համալսարանի ուսանող, առաջին երկու կուրսերում, մայրս և քույրս զրկում էին իրենց շատ բաներից, իսկ հացթուխ հայրս զօր ու զիշեր խորովում էր հնոցի առաջև, որպէսզի պահպանեն ինձ սպառնացող նեղութիւններից, և այդպիսով ինձ միջոց տան կրթութիւն ստանալու: Հօրս մահից լեռոյ՝ մայրս ստանում էր ամսական ութն ըրուբի օժանդակութիւն մի բարեկամ փարդապետից, իսկ այդ չնչին փողով,

դու հասկանում ես, մինչև անգամ չի էլ կարելի
ապրել, ծայրայեղ խնայողութեամբ... թէ ինչպէս
էին նոքա ապրում, թնչ էին շինում—ես հէնց հի-
մա էլ ինձ յաճախ հարց եմ տալիս,—սակայն ես ունէի
ամէն անհրաժեշտ բան, ունէի և մի քանի աւե-
լորդ զարդ ու զարդարանքներ: Քոյրս շարունակ
վազում էր դասատուութեան յետևեց չնչին վար-
ձատրութեամբ, իսկ երեկոյեանները գործում էր
գիւլպաներ և բաճկոններ, որոնց վաճառում էր
փողոցներում: Կիսակոյր մայրս, ակնոցները աչքերին,
նոյնպէս օգնում էր նորան, համարեա մնում էին
ամբողջ գիշերներով անքուն և շատ անգամ էլ նըն-
ջում էին գործը ձեռներին: Նրանք գառանցում էին
ինձ վերայ, իմ ապագայի վրայ, կազմելով փալլուն
նախագծեր, որոնց մէջ բոլորը, այն, բոլորը նախա-
տեսնուած էր ինձ համար, իսկ իրենց համար՝ թող-
նում էին միմիայն իրաւունք ուրախանալու իմ
յառաջագիծութեամբ, միխիթարել ինձնով, փաղա-
քել և խնամել ինձ. . .

—Ի՞նչ բարի են եղած նրանք... իսկ դու
երբէք չես էլ պատմել որևիցէ բան նոցա կեան-
քից... թնչ բաղդաւորութիւն է ունենալ *այդպիսի*
մայր և *այդպիսի* քոյր, շքեշաց Մարգարիտան,
սիրողաբար սեղմելով սիրահարի ջղային ձեռքը:

—Սյո, շատ բարի են, Մարգօ, այդ ճշմարիտ
է... չէի խօսում նոցա մասին, վախենալով մի գու-
ցէ... և չ'զիտէի, թէ ինչպէս կ'վերաբերուէիր նոցա:

Եթէ որ Աստուած մի արասցէ, նկատէի քո մէջ
ծաղր, նախանձ կամ դժգոհութիւն, որ ես այնքան
բուռն կերպով սիրում եմ նոցա—կատէի քեզ...
սիրահարուած կանայք երբեմն *անստեղծ խանդոտ*
են լինում, և հէնց ես էլ այդ իսկ պատճառով եր-
կիւղ էի կրում... կորցնել իմ զգացմունքը դէպի
քեզ, ուղիղն սասած հոգիս, ես չէի ցանկանալ... և
այդ կարող էր պատահել, եթէ որ...

—Ինչպէս ցաւալի է, որ այսքան տարւայ ժամա-
նակամիջոցում դեռ չես կարողացել ինձ իսկութեամբ
ճանաչել և հասկանալ... Ա՛խ, ես կեանքս կրտալի,
միայն եթէ կարողանայի ծառայել, հանգստացնել և
մխիթարել քո բարեսիրտ մօրը և քրոջը, որպէսզի...

—Ա՛խ կեանք, կեանք, անիծեալ պայմաններ,
ընդամիջեց նրան Օհանեանը, և ընկնելով գահա-
ւորակի թիկունքի վերայ նա նորից տաքացած և
գայրացած սկսեց խօսել, որպէս յատուկ է նորաւար-
տին: Մի խօսքով երկիւղ էր կրում, որ մի գուցէ
չէ կարող ամէն ինչ ասել, վերջացնել, որ կարող է
մոռացութեան տալ հինմովին, կարևոր միտքը:


—Հն՛, դու ասացիր, սիրելիս, թէ քեզ համար
ծօնը է, մինչև անգամ անտանելի է՝ երկզիմու-
թիւն և ստախօսութիւն... Օ, նագելի հրեշտակ, և
միթէ ես չեմ հասկանում այդ, չեմ փորձում մի-
ևնոյնը ինձ վերայ: Սիրում եմ մօրս, սիրում եմ և
քրոջս իմ սրտի բոլոր զգացմունքներով, խորին կեր-
պով յարգում եմ նրանց, բայց ասիւր խնդրեմ, կա-

րող եմ իմ սիրտս պարզել նրանց առջև: Կարող եմ քեզ երևան հանել նրանց առջև, որպէս հարազատ կին, ասել թէ՛ կապուած եմ ընդ միշտ քեզ հետ և թէ դու—իմ կինս ես... Ա՛յ, ցառում եմ, ցառում եմ ՚ի սրտէ, որ չեմ կարող: Նրանց անկեղծ սէրը, զոհաբերութեան երկար աօրինները և զրկանքները, որ մատուցին ինձ, և շնորհիւ որոնց ես փողոցային երեխայ լինելուց դարձայ ուսուցիչ, այն էլ մատաղ սերունդի, և դուրս եկայ ճանապարհ, այդ յաւիտենական ճանապարհը—կաշկանդում են ինձ: Գիտեմ, ոչ մայրս, ոչ քուրս չէին յանդիմանի ինձ, այլ, ընդհակառակը, կրկերաբերւէին դէպի քեզ բարեսրտութեամբ, սակայն մի և նոյն ժամանակ, հաւատացած եմ, որ այն վայրկեանից, երբ նրանք գիտենան թէ ինչպէս եմ կազմակերպել իմ կեանքը—ապագան, կրմահանային դարտից: Բոլոր նրանց մտածմունքները, նրանց անսահման զառանցանքը իմ ապագայի մասին, նրանց նախագծերը, փայլուն ծրագիրները, ամէնը տակն ու վրայ կը լինէին: Նրանք կը հասկանային, որ դու ինձ համար անգնահատելի ես, իսկ իրանք—ոչինչ. որ իրանց զոհաբերութիւնները ընդունելի չեն եղած Արարչին, որովհետև չըսուեցին այն պտուղները, որոնց սպասում էին և ձգտում ստանալու: Նոցա մտածմունքն է՝ տեսնել ինձ ամուսնացած օրինաւոր պատկով մի ջահել, անարատ և ապահոված օրիորդի վրայ, որը կը խնամէ իմ օրինաւոր որդոց, յագենալով անուշահոտու-

1001
55
54

թեամբ իմ ընտանեկան բաղդաւորութեան՝ ստեղծւած համաձայն իրենց իդէալի:

Ամէն ինչ տարբեր է, ամէն բաղդաւորութիւն, որը չի յամարել իրենց աշխարհայեցողութեան, թէև կարող էր լինիլն բաւականութիւն պատճառել ինձ—իրենց համար անմիտ, անկարելի է: Եւ այդ, Մարգո, և սակաւնութիւն չէ՞, իմարութիւն չէ—ոչ, իրանք այդպէս են սովորած՝ տեսնել ինձ իբր երեխայ, անփորձ, բայց վստահ տղայ, որի իւրաքանչիւր քայլը լինէր գրաւական իրենց մտածութեան և վճռողականութեան, որ և չնայելով իմ երեսուն տարիքիս, նրանք, ըստ իրենց հասկացողութեան, զխտակցօրէն տանում են ինձ՝ իրենց օգնիչ ձեռքերի վրայ: Երբեմն այնպէս ծանր է լինում ինձ համար, և մինչև անգամ անտանելի, որ ես խոնարհվում եմ և տալիս եմ ինքս ինձ ազնիւ խօսք՝ ոչինչ չանել հակառակ նրանց կամքին: Իսկայէս մինչև այժմ չի էլ եղել մի որևէ առիթ, նրանք այնպիսի հոգնատարութեամբ են վերաբերում ինձ, այնպիսի հեռատես աչքերով են նայում ապագայի վրայ, որ եթէ ես մօտենում եմ նրանց՝ իրազործելու իմ կարծիքներս կամ ենթադրութիւններս, երևում է, որ նրանք նախատեսել են իմ մէջ նոյնանման մի բան և վճռել են վաղօրօք: Բայց, ահա թէ ինչ նրանք չեն նախատեսած—այդ դու ես, Մարգարէն, որպէս ես ինքս երբևիցէ չէի անցկացրել մտքովս, թէ կարող է պատահել մի օր, որ մտնէի մի ուրիշի, այն



էլ պաշտօնակցիս ընտանիքի մէջ, քանդ ու քարափ անէի, սիրէի և գերէի մի ամուսնացած կնոջ սիրտը... Ես միշտ համարում էի այդ տեսակ ձեռնարկութիւնը, երբ դեռ ուսանող էի—քութիւն, ստորութիւն, անազնութիւն, բայց... Ա՛խ, հոգեակս, ինչ կ'լինէր, որ մենք ճանաչէինք միմիանց առաջւանից և... ինչպէս լաւ կ'լինէր ամեն ինչ ապագայում: Իսկ այժմ... թշուառ դիմ, ինչպէս ևս խղճում եմ քեզ, հասկանում եմ, թէ ինչպէս ծանր է և տանջում եմ քեզնից աւելի... քանի որ ոչինչ չեմ կարող անել, ոչնչով չեմ կարող գոնէ օգնել կամ թեթեւացնել քո վշտալի զրուածիւնը:

Գիտեմ, գիտեմ վատ է այժմ քո վիճակը, սակայն եթէ բաժանուիս ամուսնուցդ—կ'լինի աւելի վատ, որովհետեւ ես չեմ կարող խոստանալ քեզ միատեղ կեանք և լինել յայտնի կերպով հասարակութեան առաջ քեզ պաշտպան: Եւ մանաւանդ, եթէ մեր հոգևոր իշխանութիւնը իմանայ, որ ես ապրում եմ քաղաքական ամուսնութեամբ, այն էլ ամուսնացած կնոջ հետ, այն ժամանակ ինձ կրմեղադրեն անբարոյականութեան մէջ և այդ էլ կըտապալէ իմ բոլոր յոյսերը, իմ ապագան: Իմ անձնական բաղդաւորութեան և «ես»-ի համար—երբէք ես չէի էլ մտածի... սակայն նրանք, միթէ ես իրաւունք ունիմ զրկելու նրանց մի կտոր չոր ու ցամաք հացից, նրանց, որոնք տւել են ինձ թէ իրենց ամբողջ աւտղջութիւնը և թէ բոլոր ուժերը:

— Այո՛, այդ տեսակէտից նայելով, ՚ի հարկէ, դու, Օնիկ, ճիշդ ես ասում, շրջնաց անբաղդ, փափկասուն կինը, արտասուալի աչերով.—սակայն ինչպէս այդ բոլորը ծանր է... ինչպէս դժւարին է հաշտեցնել իր մէջ բանականութիւնը և սրտի պահանջը... ձշմարիտ է արդեօք, որ առաջւանից քո գլխից չէր անցել այդ... Մինչև այն օրը... Իսկ ես... ես... ինձ թւում է, թէ աւելի հեշտ է մեզ համար բաժանել իրարից, քան... Ես չըկարողացաւ աւարտել և բարալիկ, ալ-կարմրագոյն շրթունքները մրմնջացին աննկարագրելի կերպով և ակամաօրէն փակեցին: Արտասուների խոշոր կաթիլները, որպէս կարկաչուն աղբիւրի նորաբաց ակից՝ գլգլացին և սկսեցին սահել նրա «մասրանման» և հրապուրիչ թշերի վերայ և, ծածկելով երեսը իր սառն, փայտացած ձեռիկներով, ընկաւ իւր սիրելու պարանոցով՝ բնազդամբ որոնելով մխիթարութիւն և բերկրութիւն՝ նրա հրատապ, վառ փաղաքշանքների մէջ:

— Բաժանուել, Մարգօ, օ՛, չէ, չէ, իմ սիրելիս, բայց և ինչո՛ւ,—ասաց Օհանեանը՝ թափելով սիրոյ համբոյրներ նրա արտասուալի դէմքի և բարձրագիւր կրծքի վրայ,—մի ասիր այդ, ինչո՛ւ խզել մեր սիրոյ պօտքիան, այդ հազւագիւտ բաղդաւորութիւնը երկու արարածների, որոնք կապած են իրար հետ, անշահախնդրական սիրոյ ձգտումներով... թո՛ղ մեր ապագան բաղդի կամքին, թող լինի այն, ինչ որ

նա կըտնօրինէ... Ես—Փատարիտ *) եմ, աղունիկս,
 և Հաւատում եմ բաղբի ասողին: Մի հեռացիր
 ինձնից, իմ սիրելի... Բո մէջ է իմ կեանքի լոյսը,
 իմ հանգստութիւնը և խնդութիւնը: Հաւատո՛ւ,
 հոգեակս, եթէ մենք միանանք և ապրենք ի միա-
 սին, բոլոր մեր սիրոյ պօռնիան մի ակնթարթում
 կ'ոչնչանայ կանայտանայ, իսկ բաւականանայ մի-
 միայն ֆիզիքական կողմով, զժբաղաբար, և՛ ոչ
 մէկս չենք կարող... Այդ ըսպէին ժամացոյցը զար-
 կեց ինն և Մարգարիտան իսկոյն սթափուեցաւ:

— Ա. խ Ատտում, ինչպէս երկար նստեցի քեզ
 մօտ, իսկ տանը, գուցէ արդէն սպասում են ինձ...
 — Ինչ կըլինէր նրա ճարը, եթէ եկած լինէին Հիւ-
 րեր և ամուսինը ուղարկէր նրա յետեից կուրսերը,
 կամ հէնց ինքն անձամբ գնար: Եւ եթէ այնտեղ
 պատահէր կնոջ ընկերուհիներից մէկնումէկին և
 իմանար, թէ ինչպէս ուշ-ուշ է յաճախում դասա-
 խօսութիւններին, այն ժամանակ չնայած նրա բո-
 լոր հաւատարմութանը դէպի կինը, նա կընկատէր
 կասկածել, կըհետեւէր և... ամէն ինչ կ'իմանար:

— Ինչ պատահեց քեզ, Մարգո, ինչպէս գու-
 յանկարծ շփոթեցիր, հոգատարութեամբ հարցրեց
 Օհանեանը՝ օգնելով նրան հազնել վերնազգեստը և
 զլխարկը, և երբ տիկինը ասաց նրան թէ՛ իրեն

*) Փատարիտը մի վարդապետութիւն է, որ դաւա-
 նում է ճակատագրական նախասահմանութիւնը, իսկ ֆա-
 տարիտը նրա հետեւողն է:

անհանգստացում է մի բան՝ սառնօրէն աւելաց-
 րեց.— Ի հարկէ, եթէ որ հարցը առաջարկած
 կըլինի զիտակցօրէն և նա ուղղակի կըհարցնէ, այն
 ժամանակ խաբել պէտք չէ... Միայն թէ՛ ինքը չը-
 սկսես բացառութիւնը... Մի ընկնիր կուռի մէջ,
 այլ աւելի լաւ է խուսափել: Այն ազատութեան
 մէջ, որին դու ցանկանում ես—բաղդաւորութիւն
 չի կարող լինել... այնտեղ մեզ սպասում է տարդ-
 կութիւն և անպերջ դատարկութիւն...

II.

Չնայելով այն քնքուշ և խոր հոգեկան ընկե-
 րակցութեանը, որը կազմւել էր վերջին ամսում տ.
 Յովսէփեանի և պ. Օհանեանի մէջ, այն երկար ու
 ձիգ գրույցները, որոնց մէջ հանգստանում էր մա-
 տաղ, զգայուն կինը, ստանալով պատասխան իր
 բոլոր առաջարկած հարցերին, նա բնազդօրէն զգաց
 որ Օհանեանը չի սիրում իրեն, այսինքն սիրում է
 ո՛չ այնպէս, որպէս ինքն էր ցանկանում: Նրա դե-
 ռափթիթ վառ հոգին պահանջում էր լի հրապու-
 րանք փոխադարձ անկեղծ հատուցման և այն յա-
 րաբերութիւնների, որոնց մէջ անձնական «ես»-ը
 չէ ճանանչվում, դադարում է գոյութիւն ունենա-
 լուց, փոխարինւելով բացառապէս նեղութիւնների
 սիրեցեալ մարդու շահերի պատճառով: Ընտանեկան
 կեանքը բաւականութիւն չտւեց Մարգարիտային,
 որովհետեւ ամուսին զոյգերի բնաւորութիւնները խիստ

տարբեր էին միմեանցից: Ի՞նչպէս պատահեց, որ նա՝ որ միշտ խօսում էր ամուսնական սիրոյ մասին, երբ դեռ չէր ամուսնացած, վճռեց կապել միմեայն լոկ գատողութեամբ, Մարգարիտան հէնց ինքն էլ չըտուեց իրեն հաշիւ: Ամենից աւելի հաւանական էր այն, որ նորա կեանքը իր խնամակալի տնում, վերջինիս հասունացած և նախանձոտ օրիորդների մէջ, էր գոյութիւն ունեցող ստիպմունքներից մինն, որը և մղեց նրան դէպի այդ վճռողականութիւնը: Բացի զրանից պ. Յովսէփեանը չնայելով իր երեսուն և ութ տարիքին դեռ ևս թարմ ու ժիր էր: Նա այնպէս էր սիրում Մարգարիտային, այնպիսի հոգատարութեամբ, այնպիսի պատուաւոր կերպով էր վերաբերվում դէպի կինը, որ այն օրը, երբ նա ինքն առաջին անգամ խօսք բացեց իր սիրոյ մասին և հարցրեց նրան, թէ համաձայն է իրեն կին դառնալու, երիտասարդ աղջիկը առանց մի որ և է տատանման՝ տուեց իր համաձայնութիւնը: Ծըշմարիտ է, Մարգարիտայի այն ժամանակուայ նկարագրութիւնը ամուսնական կեանքի նկատմամբ վերին աստիճանի տարբերում էին նրանից, որպիսին երևեցաւ իրականութեան մէջ: Մարգարիտան զրտաւ ամուսնութեան մէջ լիովին ազատութիւն, հնարաւորութիւն՝ կազմել կեանքը իր ճաշակի և ճրգտումների համեմատ, բոլորովին փոռացութեան տալով, որ փեսացուները փոխուում են, երբ զառնում են ամուսիններ: Կարծր մի տես մամուլը

Նոցա ամուսնական երկու տարիները անցան, գնացին աննկատելի կերպով: Պ. Յովսէփեանը ծանրաբեռնւած ծառայական հոգսերով, միշտ լուրջ և կղզիացած, շատ քիչ էր պատկանում իր ընտանիքին: Մտաթւայ մէջ երկու-երեք գիշեր նա կնոջ հետ ի միասին գտնւում էր, նշանակւած օրերը, իր ծանօթների մօտ, մի անգամ էլ շաբաթւայ մէջ իրենք էին ընդունում հիւրեր, իսկ շաբաթւայ մնացեալ օրերը Յովսէփեանը պարապւմ էր պահպանիւցում կամ իր զբոսենեակում, միանգամայն խորասուզելով զանազան հարցերի և պրօեկանների մէջ:

Պ. Յովսէփեանը համարում էր իրեն ամենաերջանիկը ամուսիններէ մէջ, տեսնելով թէ՛ որպիսի նախանձելի տպաւորութիւն է առաջացրել հասարակութեան մէջ իր ջահիլ կինը, որպիսի բարի և տնարար տանտիկին է, որպիսի հաւատարիմ կին է, և ոչ մի անգամ չըտուեց ինքն իրեն հարց—բաղդաւոր է Մարգարիտան, կարող է լիովին բաւականութիւն ստանալ նրա անյազ, հրաբորբոք բնութիւնը, նրա տաք գլուխը, այն չօր բորժուազական կեանքով, որով նոքա ստրկում էին:

Մարգարիտան և ոչ միանգամ իր կողմից ցոյց չ'տուեց դժգոհութիւն մարդուն մոթերի յափշտակութեան և ևլքի բացաւայտութեան մասին: Նա շատ էր զբաղւում, թարգմանութիւններ էր անում զանազան խմբագրութիւնների համար, շարունակ կարդում էր և միշտ հետևում մտաւոր

կեանքի շարժմանը, այնպէս որ՝ կարծես իսկապէս մտել է ընտանեկան կեանքի հոգու մէջ, որի կարգաւորութիւնը, ստեղծւած ամուսնու կողմից, երբ և իցէ չէր կարող ոչ մի բանով խանգարել: Երկար տարիների ընթացքում պ. Յովսէփեանը սովորութիւն էր արել իրեն համար նախ քան թէ խմելը՝ առաւօտները զբօսնել, յետոյ վերագառնալ տուն, կարգաւ լրագրներ, թէյի ժամանակ նախաճաշել և ապա գնալ ծառայութեան: Մօտաւորապէս ժամի երկուսին վերագառնում էր տուն, անհոգ մնում էր բազկաթոռում նստած մինչև ճաշը, իսկ յետոյ փոխելով վերնաշորերը, լւացւում էր, մտնում էր սեղանատուն, որպէս մի հիւրասէր տանտէր, որպէս մի քաղաքավարի և հոգատար ամուսին: Դարասիմ Յովսէփեանը սիրակէզ համբուրում էր կնոջ ձեռը, հարցնում էր նորա առողջութեան մասին, այն մասին, թէ քնչ էր շինել, քնչ էր պատրաստել ճաշելու, որտեղ էր նա, ո՞ւմ է տեսած և, վերջացնելով այդ անփոփոխ, պաշտօնական հարց ու փորձերը, սկսում էր պատմել Մարգարիտային իր ծառայական գործերից՝ հոգսերը, թիւրիմացութիւնները, մասնակից էր անում նրան իւր վրդովմունքներին և անյաջողութիւններին, ուրախութեան և սպասելիքներին:

Նա այնպիսի եւանդով էր անձնատուր եղել իրեն չոր ու ցամաք դործին, այնպէս էր հետաքրքրւում իր պատասխանատու Ակադեմիայի ուսուց-

չի և ուսումնական ժողովի անդամի պաշտօնով, որ և ինքն չընկատելով այն, սաստիկ ՚ի չարն էր գործ դնում կնոջ համբերութիւնը՝ ստիպելով նրան լսել ամբողջ պատմութիւններ ուսումնարանական կեանքից, երբեմն էլ զանգատոււմ էր իր պաշտօնակիցների դէպի գործը ունեցած անգործունէութեան և սառնասրտութեան վրայ: Մարգարիտան օժտուում էր շատ քիչ ընդունակութեամբ՝ ուշադրութեամբ լսելու այն տեղեկութիւնները և պատմութիւնները, որոնք չէին կարող անգամ թեթև կերպով շարժել նրա հետաքրքրութիւնը: Մարգարիտան ճարպիկութեամբ և իր ժամանակին, և ոչ անտեղի, առաջարկում էր հարցեր, ժպտում էր, հպատակում էր, երբեմն էլ թեթևօրէն ընդդիմախօսում էր, և, այդպիսի յարաբերութեամբ դէպի պատմախօսը առիթ էր տալիս նրան համոզելու, որ լսում է չըձանձրանալով և ուրախութեամբ: Այդպիսի ձևականութիւն Մարգարիտան անում էր ոչ թէ այն նպատակով, որ հաճոյանայ կամ մարդու «աչքը մտնի», այլ աւակամայից: Սկզբում նրան իսկապէս հետաքրքրւում էր մարդու ամբողջ գործունէութիւնը և նա՝ Մարգարիտը ցանկանում էր գիտենալ այն ամէնը, ինչ որ կատարւում էր ամուսնու պաշտօնատեղում, իսկ յետոյ երբ պ. Յովսէփեանը ուզեցաւ մասնակից անել նրան իր ջնջին, աննշան հոգսերին և պաշտօնական դառնութիւններին, Մար-

գարիտան թէև տխրում էր, բայց քաղաքավարութիւնից ստիպւած չէր վճռում արտայայտել իր շարժարանքը, կամ վերջ տալ մարդու ղառարկաբանութեանը, փոխելով խօսակցութեան ձևը Յովսէփեանի բոլոր ծանօթները և բարեկամները համարում էին նրանց կապը օրինակելի և ոչ մէկի զլխից չէր էլ անցկացել, որ երիտասարդ կինը սոսկալի, անտանելի կերպով տրտում էր՝ ապրելով այդ միատեսակ կեանքով: Կարգալով նոր լոյս տեսած գրքեր և օրագրեր— լրագրներ, հետաքրքրելով հասարակական հարցերով, Մարգարիտան չունէր ոչ մի մարդ, որի հետ կարողանար խօսել սրտանց, բաժանել էր իր մտածմունքները և զգացմունքները: Իերասխմ Յովսէփեանին ոչ մի բան չէր զբաղեցնում այդ շրջանից և մի բանի փորձերից յետոյ սկսեց նրա հետ համանման խօսակցութիւն, թափել նրա առջև իւր վրդովմունքները և սպասելիքները, հետաքրքրել իւր զբաղմունքով, բաժանորդ անել իւր մտքերին— Մարգարիտան հրաժարւում էր յոյսից՝ տեսնել մարդու մէջ՝ բարեկամ և ընկեր: Նա տեսաւ, որ իրենց բաժանում է մի խոր անդունդ և շրջափակեց ինքն իրեն, զգալով սարսափելի անբաւականութիւն և վիշա: Յագեցած անհոգ կեանքը, գաւառական բաղդաւորութիւնը և մտաւոր շարժման բացակայութիւնը չկարողացան բաւականութիւն պատճառել տիկին Մարգարիտային: Ինչ որ ուսումնարանում եղած ժամանակ

տիկ. Յովսէփեանը համարւում էր մինն նրանցից, որի վրայ յոյս են տածում և նրա բոցավառ բնաւորութիւնը մօտկացրեց նրան աշխարհային կեանքին, այնպիսի գործունէութեան, որը կարող էր կշտացնել նրա գոյութիւնը և յղկել նրա շահերի ուղին: Եթէ որ ճակատագիրը ուղարկէր նրան, մի օր առաջ, մայրական բաղդաւորութիւն— նա անկասկած կրդառնար ամենաքնքուշ, հոգատար մայր: Եթէ որ նրա մարդը երևար թոյլ հիւանդոտ անձնաւորութիւն— Մարգարիտան, ի հարկէ՝ կրդառնար մի ինքնագոհ «գլխոտ քոյր», բայց, կարծես-դիտմամբ, նրա ներկայ կեանքում ոչ մի բան չէր պահանջում նրանից, ոչ գոհաբերութիւն և ոչ էլ մի մեծագործութիւն, ուստի մատաղ ուժերը փնտռում էինք էլք, հոգին ջանք էր անում արտահոսել միտքիցէ բանի մէջ, կանգ առնել միտքիցէ բարձր, պայծառ, գործունէութեան վրայ: Այդ ժամանակ բաղդը մօտեցրեց Մարգարիտային Օհանեանին: Մատաղ և գեղեցկադէմ ուսուցիչը, որը դասախօսում էր ակադեմիայի բարձր կուրսերում, էր մի անձն, ըստ երևոյթին միայն, փայլուն զարգացմամբ, որը կարողանում էր վառ կերպով և պերճախօսութեամբ մեկնել իւր մտքերը: Ենթադրուած զգացմունքներ Օհան Օհանեանը շատ շուտով դարձրեց իւր վրա՝ երիտասարդ կնոջ ուշադրութիւնը: Տիկ.

Յովսէփեանը ագահութեամբ և լարած ուշադրութեամբ լսում էր նրա ատենաբանութիւնը, որը բացեց նրա առջև մի նոր յոյսի աշխարհ: Նրա իւրաքանչիւր խօսքը, ներշնչած խորին համոզմամբ, իւրաքանչիւր միտքը գտնում էին նրա՝ Մարգարիտայի մէջ, արձագանք, յարուցանում էին նորանոր ցնորքներ և սպասելիքներ, որոնց նա՝ Մարգարիտան արդէն հաշուում էր մեռած և թաղւած: Օհանեանը սլաճառ զմայլմամբ նայում էր կանանց կուրսերին, երբ տեսակցւում էր տիկ. Մարգարիտայի հետ առանձին, շատ և բազմիցս անգամ խօսում էր նրանց փալլաւն ապագայի մասին, այն օգտիմասին, որը նրանք կը բերէին ո՛չ միայն այն օրիորդներին, որոնք կը մտնեն դպրոց՝ դառնալ վարժուհի և ստանալ պաշտօն, այլ և այն կանանց և մայրերին, որոնք կը թւելով և զարգանալով, կը դառնան անկասկած ամենալաւ տնարար մայրեր և բարեկամներ իրենց ամուսիններին, կըլինին օգնականներ և սիրելի ընկերակիցներ սիրեցեալ մարդկանց:

Օհանեանի խօսակցութեան ազդեցութեան ներքոյ, տիկ. Յովսէփեանը վճռեց իր ունեցած ազատ ժամերին այցելել ակադեմիայի մասնազիտական բաժինների դասախօսութիւններին և ահ ու դողով յայտնեց ամուսնուն իւր այդ ցանկութեան մասին: Նա սպասում էր ամուսնու կողմից մերժումն և մինչև անգամ փափագում էր կռիւ և զայրույթ,

բայց նա իրեն յայտնի պատճառներով մեծ ուրախութեամբ վերաբերեց կնոջ ձգտմանը՝ շարունակել ուսումը, և զովաբանեց իր կնոջ խելքի լուրջ բարեկարգութիւնը, ակնարկելով, որ եթէ կըլինին իրանց որդիք, այն ժամանակ կարող կըլինի կառավարել առանց վարձկան ուսուցիչների և ուսուցչուհիների, որոնց հետ զործ ունենալը շատ ծանր է:

Այդ ժամանակահանդիս տիկ. Յովսէփեանի համար արեղծւեց մի միջոց՝ ստեպ-ստեպ տեսակցել Օհանեանի հետ: Չնայած բոլոր հրաւերքին Փերասիմ Յովսէփեանի և նրա կնոջ, Օհանեանը կտրոզական կերպով հրաժարուում էր երբեմն-երբեմն զնալ նրանց մօտ՝ ժամանակ անցկացնելու, բացատրելով իր այդ մերժումը՝ զբաղմունքների շատութեան պատճառով, որ ամենևին չէր խանգարում նրան, համարեա ամէն անգամ ուղղեկցել տիկ. Մարգարիտային ակադեմիայից տուն և, երբեմն էլ խօսակցելով մի օր և է շատ հետաքրքիր նիւթի վրա, նոքս անցնում և հեռանում էին այն փողոցից, որտեղ անըրում էին Յովսէփեանները, և զարմացմամբ կանգ էին առնում, նկատելով, որ գտնուում են շատ հեռու տնից:

Պատահմամբ մի անգամ, երբ նրանք բոլորովին այնպատեղի կերպով երևեցան այն փողոցում, ուր ապրում էր Օհանեանը, և որը առաջարկեց տիկ. Մարգարիտային մտնել իրեն մօտ մի փոքր հանգստա-

նալու և մի բաժակ թէյ խմելու, կանացի մատաղ սիրտը տատանուում էր, բայց չետոյ, մտաբերելով, որ մարդը հրաւիրւած է ուսումնարանական փոյռ-վին մասնակցելու—համաձայնեց, և այդ օրւանից, համարեան, միշտ տիկ. Յովսէփեանը անցնում էր ամբողջ երեկոներ Օհանեանի համետ և պարզ սենեկում, մտաւորապէս և բարոյապէս հանգստանալով այն տաք խօսակցութեան մէջ, որը տեղի էր ունենում երկու վառվառուն, դեռահաս արարածների մէջ: Այդ դեռ առաջին գաղտնիքն էր, որ Մարգարիտան իրեն թոյլ տւեց ունենալ իր անդուրեկան ամուսնուց—և նրան չարտօյար տանջում էր մի միտք՝ անպատճառ ծածկել ամուսնուց այդ իր մաքուր և բարեկամական յարաբերութիւնը դէպի Օհանեանը: Սակայն պ. Օհանեանը հէնց ինքն էլ այդ էր ցանկանում, գտնելով, որ այդ գաղտնապահութիւնը կազմում է ամենանուրբ, զմայլեցուցիչ փայլը՝ իրենց ընկերավարութեան, որ խզել նրան—կընշանակէ զրկել ծաղիկը իր անուշահոտութիւնից... և Մարգարիտան հնազանդուում էր նրա կամքին, ինչպէս որ հնազանդուում էր իր բարեկամի ամէն մի ցանկութեանը: Իսկ յետոյ, երբ նրանք բացատրւեցին, երբ խօսքը սիրում եմ, ասեցաւ նրանց մէջ և երբ անցան հիացման և հրճուանքի առաջին շաբաթները—Մարգարիտան սարսափամբ ուշքի եկաւ և հասկացաւ իր դրութիւնը: Սուտ ասել մարդուն, խաբել նրան, վարել երկդիմի կեանք

նենդաւոր և ուխտադրութ կնոջ—նա չէր կարող նրա ամբողջ ազնիւ էութիւնը ապատամբուում էր ամենայն յամառութեամբ. և ասաց զիմակաւորւած, իդէալիստ համալսարանական պերճախօսին, որ ցանկանում է յայտնել ամուսնուն ամէն ինչ պարզութեամբ և բաժանել նրանից: Տ. Մարգարիտան սպասում էր, նա իրաւունք ունէր սարսելու, որ պ. Օհանեանը, որի իդէալի ազնուութեան առաջև Մարգարիտան էլ խոնարհուել էր, որի վստահ և վառ ատենաբանութեամբ այդպէս հրապուրւել էր—չի էլ մտածի բացարձակապէս սալացուցանելու գոյութիւն ունեցող ֆակտը և կրգառնայ իրեն ընկեր և բարեկամ, փոխելով իրեն՝ Մարգարիտայի հասարակական դրութիւնը, որ ինքը տապալեց յանուն սիրոյ՝ դէպի ազնութիւն քարոզող ուսուցիչը, դէպի պ. Օհան Օհանեանը:

Մարգարիտան որդիք չունէր. նիւթական միջոցները, որ ինքը իր թարգմանական աշխատութիւնների շնորհիւ ձեռք էր բերել, այնքան մի պատկառելի գումար էր, որ (տիկ. Յովսէփեանը) երկիւղ չէր կրում լինել ծանրութիւն Օհանեանի համար և հէնց դրա համար էլ ինքը վստահութեամբ առաջարկեց միատեղ կեանք վարել:

Բայց յարգելի ուսուցիչը վախեցաւ: Օգտուել ամուսնացած կնոջ սիրովը, ներմուծել նրա ընտանիքի մէջ թոյն և յանցաւոր տարիանք, մղել նրան դէպի խաբէութիւն, մղել դէպի նենգութեան և

ուխտանգանցութեան զէպի օրինաւոր ամուսինը—էր Օհանեանի նկատմամբ «սիրոյ պօէզիան», իսկ միատեղ կեանքը, որի մէջ նա պատիւ կուեննար երեւալու, որպէս պատասխանատու անձն, որպէս պաշտպան քաղաքական ամուսնութեան, որպէս ընկեր մարդ—բարեկամ այն կնոջ, որի հետ ապրելով՝ ի միասին, ո՛չ միշտ լաւ, այլ և վատ,—այդ նրա նկատմամբ՝ «սիրոյ պրօզան», էր, մի դատարկութիւն, որից նա վախենում էր, որի շնորհիւ մինչև այժմ չէր ամուսնացել. «Թէև նրան մի քանի անգամ պատահեցին յարմարաւոր ամուսիններ»։ Օհանեանը այդպէս և ասաց «յարմարաւոր ամուսիններ», միանգամայն մոռանալով, որ այդ Փրագով հէնց ինքն իրեն վայր ձգեց բարձր պատւանդանից, ոտնակոխ արաւ իր իգէսլական հերոսի օրէւր (Չրջափայլը)։

Տիկ. Մարգարիտան այն ժամանակ ահաբեկւած լսում էր Օհանեանի խօսակցութիւնը, որը շատ քիչ ընդհանուր մտքեր էր պարունակում իր մէջ, համեմատած այն բանի հետ, որ ճառում էր ընկերական և ուսանողական շրջաններում, որոնց մէջ նա հրաւիրում էր զէպի մեծագործութիւն, մրցումն հասարակութեան հետ, որը արտայայտում էր կեանքի իգէսլը՝ ձեռք-ձեռքի տւած փափկասուն կնոջ հետ, լինել հաւասար օգնականներ և ընկերներ, որպէս փայլուն օրերում, այնպէս էլ դառն և սև...

III.

Երկար տատանմունքից և լուզմունքից լետոյ տիկ. Յովսէփեանը վճռեց վերջնականօրէն պարզել Օհանեանի հետ՝ ստանալ նրանից համաձայնութիւն միատեղ կեանք վարելու կամ բաժանւելու, «մնաս բարև» ասելու ընդ միշտ, իսկ լետոյ, պատմելով ամէն ինչ՝ ցաւալի պատմութիւնը իւր հրապուրանքի—տալ նրան լիազօրութիւն վճռելու իրենց ապագայ բաղդը, այսինքն՝ մնալ ամուսնու մօտ կամ հեռանալ նրանից և սկսել մէնակ կեանք վարել, որպէս ժամանակաւոր պատիժ իւր պարտազանցութեան։ Օհանեանի պատճառաբանութիւնները մօր և քրոջ վերաբերմամբ, նրա վառ, զգացւած պատմութիւնը նրանց զոհաբերութիւնների մասին իր համար և նրանց ցնորքների վերաբերմամբ, որոնց նա կըխորտակէր, եթէ բացարձակօրէն ապրէր Մարգարիտայի հետ՝ առաջին վայրկեանում պայանձացրեց, կաշառեց ջահէլ կնոջը և միայն այժմ ճանապարհին զէպի տուն՝ նա սկսեց, ըստ արժանայն, գնահատել, կշռել սիրահարի խոստովանանքը։

— Ե՛նձ կարելի է զոհաբերութիւններ անել, նրան—չէ, խօսում էր նրանում խանգոտ զգացմունքը, սակայն ինչո՞ւ, որովհետև, որ այդպէս ծեռնտու է, գործնական է, քիչ է պատասխանատուութիւնը... նա կամենում է գաղտնագողի սէր, թագնւած օրինաւոր ամուսնու պաշտպանութեան տակ, վախենում է մարդկանց զրոյցներից, զրպար-

տութիւններէց և քննադատութիւններէց, վախե-
նում է ընկնել փառքի և պատւի բարձրութիւնից,
իսկ ես—ես կեանքս եմ խորտակում յանուն սիրոյ
դէպի նա, և ո՛չ միայն կեանքս, այլ և պատիւս, ա-
պագաս, խիղճս... նաև ամուսնուս բաղդաւորու-
թիւնը, ամուսնուս ինձ համար այդ ազնիւ, ան-
պայման անձնատուր եղած մարդու: Նրան՝ Օհան-
եանի համար իմ զգացմունքը—խաղալիք է, ձեռնտու
զարան: Օ՛, ի՛նչ սոսկալի և ցաւալի դրամա...

Եւ որքան երկար էր մտածում թշւառ տի-
կինը, այնքան որոշ կերպով էին պատկերանում բնա-
ւորութիւնները այդ երկու մարդկանց—ամուսնու
և Օհանեանի, և ակամայից առաջինի լաւ կողմերը
գերակշռում էին: Թո՛ղ նա համաձայնէր միօրեւիցէ
ուրիշ բանով, թո՛ղ նա ասէր թէ՛ միատեղ կեանքը
կնոջ հետ, պատասխանատուութիւնը կնոջ համար,
հնարաւորութիւնը ապօրինի ընտանիքի—կարող են
վնասակար երևալ նրա գործունէութեան համար,
արգելառիթ լինել բոլորովին անձնատուր լինելու
սիրեցեալ գործին,—տիկ. Մարգարիտան բոլորը կը-
հասկանար, կ'ըմբռնէր, կըգնահատէր, կ'արդարաց-
նէր... Սակայն սառը դատողութիւնը օգտաւէտու-
թեան և անօգտաւէտութեան մասին, ահ ու եր-
կիւղ հասարակական կարծիքի առաջ... երկիւղ դա-
տարկութեան—դրա հետ նա չէր կարողանում հաշ-
տել: Ապա էլ ինչո՞ւ այդ դիպւածում Օհանեանը
թող տւեց իրեն հրապուրելու իրանով մի ամուս-

նացած կնոջ, կիսամեռ անել նրա կեանքը, ցոյց
տալով, որպէս փայլուն կեանք երկուսով, իսկ յե-
տոյ, երբ նա, կուրացած աչերով հետևեց նրան—
կարգալ, բացատրել, որ սիրոյ պօղկիան կայանում
է խորհրդաւորութեան և ստութեան մէջ... իսկ
բոլոր մնացեալը—գատարկութիւն, ուրեմն՝ ճշմար-
տութիւնը և ազնուութիւնը—կեանքի գատարկու-
թիւնն է—և այդ ստում էր նա, նա—նրա իղէա-
լը: Կամ թէ դեռ նա, որպէս պէտք էր, լաւ
չէր ճանաչում Մարգարիտային, որը ձեռնտու
էր համարում վարել այդպիսի անկանոն կեանք:
Օգտւել, որպէս օրինաւոր կին, իւր շահերով, ի-
րաւունքներով և յարգանքով, օգտւել իր մարդու սի-
րովն ու հոգատարութեամբ, բայց ինքն ըստ ինքեան—
խաբել նրան՝ ամուսնուն, և վերջն էլ, մինչև անգամ իր
սիրահարի որդիքը մտցնել իր ամուսնու ընտանիքի մէջ,
տալով նրանց օրինաւոր անուն, դիրք, վարձատրե-
լով նրանց հայրական սիրով, որից նրանք զուրկ
էին...

«Ո՛չ, ո՛չ—այդ անազնութիւն է, այդ ան-
կարելի է, վճռեց երիտասարդ կինը, մօտենալով տա-
նը, ուր ապրում էր.—ես պէտք է ժողովեմ իմ կա-
նացի թող ուժերը, իմ ամբողջ հոգին և վերջ դնեմ
այդ խայտառակ կապին, այլապէս ես—խորխորատի,
անդունդի եզերքումն եմ: Ո՛չոք իրաւունք չունի
արգելք լինել ինձ, որ ոչնչացնում եմ իմ կեանքս,
սակայն ՚ի չիք զարձնել ամուսնուս կեանքը, ստեղ-

ծել ազնիւ, ճշմարտասէր մարդուս խաբուսիկ դրու-
թիւն իւր հարագատ գերզատասնի մէջ, շինել նրան
խաղալիք, պատասպար իմ վալաշտ ցանկութեանը...
նչ, ոչ մի ժամանակ:

Եւ դեռ առաջին անգամ այդ երկու—երեք
ամսում, Մարգարիտան լիովին պարզ և գիտակցո-
րէն դիտեց, ուշադրութեամբ զննեց իւր դրութիւնը,
հասկացաւ թէ որպիսի սլնքոր ճանապարհի արժա-
նացրեց իւր իգէալի այդ որոնումն, այդ ձգտումը
դէպի անձնական բաղդաւորութիւնը, շնորհիւ այն
անբաւականացուցիչ իրի, որը նա զգում էր ընտա-
նեկան կեանքում: Ի՞նչպէս են ապրում ուրիշ կա-
նայք, ի՞նչով են յագեցնում իրենց կեանքը, փորձե-
լով բժշկել այն վերքերը, որոնց ստեղծում է կախար-
դիչ զմայմունքը: Մի՞թէ մեծամասնութիւնը այն
օրիորդների, որոնք մարդու են գնում ամէնազիւ-
րափոխ հասկացողութեամբ ամուսնական կեանքի
պայմանների, չեն հետաքոտում միևնույնը, որ և
ինքն էր փորձել: Չէ որ նրանց ևս տիրում է վիշտ,
քարշ գալ զանազան կողմեր, ձգտումն մի որևէ
բանով յագեցնել կեանքը, որպէսզի ազատուին այդ-
պիսի մաշիչ, սպանիչ տխրութիւնից, որը պատ-
րաստում է ամէն տեսակ գայթակղութեան ոտնա-
քարեր:

Մարգարիտան պատկերացրեց իր բոլոր բարե-
կամներին և ակամայ զարհուրանքով նկատեց, որ
բաղդաւոր ամուսնութիւնների թիւը չափազանց

սակաւ է, եթէ միայն կային և այդպիսիները...
Միայն այն կապերը, ուր գոյութիւն ունէին երեխա-
ներ և մօր մէջ երևում էր սուրբ, օրինաւոր հս-
գատարութիւն նրանց կրթութեան և զարգացողու-
թեան մասին, միմիայն այդտեղ մի ինչ որ բան
լիշեցնում էր գաղափարական ընտանիք, իսկ բոլոր
մնացեալ միւսներում—Մարգարիտան տեսնում էր,
որ այր և կին ապրում են տարբեր կեանքով, հե-
տևելով զանազան նպատակների, հետաքրքրւելով
բազմատեսակ բաւականութիւններով և միայն ար-
տաբուստ երևացնում էին իրենց ամուսնական գոյ-
գեր: Եւ որքան շատ էր մտածում Մարգարի-
տան իր ծանօթների վրայ, որքան աւելի ուշա-
դրութեամբ էր թափանցում ամուսինների յա-
րաբերութիւնների մէջ, այնքան աւելի պարզ էր
հասկանում, թէ ո՞րքան մարդավայել յարաբերու-
թիւն էր իր մարդու յարաբերութիւնը, ո՞րքան նա
բարձր էր այդ կէտում ուրիշներից:

Իրենց վարած երկու—երեք ամուսնական տարի-
ների ընթացքում Մարգարիտան ոչ մի անգամ ա-
ռիթ չուներցաւ զանգատել իր մարդուց, նրա փոխա-
րէն ամօթից կարմրել և կամ դատափետել նրա մի-
օր և է վարմունքը:

Գերասիմ Յովսէփեանը իր կնոջ համար, որպէս
անպարսաւելի, ազնիւ մարդ, որպէս անձնատուր
և հաւատարիմ ամուսին, հիւրասէր, յարգելի տան-
տէր և խնամածու, անկեղծ ծառայող, որը սրբու-

Թեամբ կատարում էր իւր քաղաքացիական պաշտօնը՝ ունէր միմիայն մի պակասաւթիւն—նա տարիքով շատ մեծ էր կնոջից և մոռանալով, որ իրենց մէջ ընկած է մի ամբողջ կեանքի շրջան,—նա որոնում էր ամուսնական կեանքի մէջ անդորրութիւն և հանգստութիւն, իսկ նա, Մարգարիտան մացրեց ընտանիքի մէջ բոլոր վառ եռանդը՝ մատաղ հրապուրւող բնաւորութեան։ Նա, պ. Յովսէփեանը նայում էր կնոջ վերայ, որպէս մի կատարեալ մարդու վերայ, որ տեսնում է ընտանեկան կեանքում հանգիստ, յուսալի ապաստանարան, որի համար անմատչելի է ոչ փոթորիկ և ոչ ալեկոծութիւն։ Բաց միթէ արժանի էր այդ ակամայ սխալմունքի համար վրէժխնդիր լինել ամուսնուց, փշրել նրա կեանքը, ծաղրածութեան նիւթ դարձնել նրա ազնիւ անունը։ Այ, ոչ, Մարգարիտան ինքն զօրծեց յանդուհան սխալ ամուսնանալով Յովսէփեանի հետ, և այժմ պարտական է խեղդել իր հրապուրանքը, կիրքը, արմատախիւ անել իր սէրը գէպի Օհանեսանը և խոստովանել պ. Յովսէփեանին... Սակայն յետոյ, եթէ որ ամուսինը ներէ Մարգարիտային, որպէս իր կնոջը և մինչև անգամ վերադարձնէ իր յարգանքը, եթէ որ բաղդը կ'որոշէ տալ երեխայ, ո՛ր, այն ժամանակ կըծառայէ, կըքաւէ իր ժամանակաւոր յանցանքը և, մոռանալով իր անշնական «ես»ը՝ ամբողջովին և անդարձ անձնատուր կըլինի ընտանիքին և մարդուն, գտնելով կատարւած իր

պարտքը և պատասխանը իր որոնած հարցերին և երազներին։

IV.

Մի քիչ մեղմացած այդ վճռով, տիկ. Մարգարիտան արագութեամբ վեր բարձրացաւ քարեայ տան փառաւոր սանդղատի լայն աստիճաններովտան երկրորդ յարկը, որտեղ գտնուում էին պ. Յովսէփեանի շքեղ, կահաւորւած սենեակները։ Մարգարիտան արդէն կանգնած էր դռան մօտ, սուլասելով մինչև որ ծառան կըբանար դուռը, երբ յանկարծ լսելի եղաւ աստիճանների ներքևից ծանօթ քայլեր։ Մարգարիտան յետ նայեց և ակամայ սարսափանքով նկատեց, որ այդ իւր ամուսինն էր։

Մի քիչ առաջ տեղի ունեցած արհաւիրքը կարծես թէ միանգամից կենդրոնացան նրա զլխում. նրան թւում էր, որ ամուսինը սովորական ժամանակից շուտ վերադարձած ուսումնական ժողովի պարապմունքից, գնացել է ակադեմիան և հարցրել է Մարգարիտային... Թէև նա այնտեղ չէր, բայց կարող էր հարցնել, վերջապէս հէնց իրեն ուսուցիչ-ընկերները կարող էին դիմել նրան և հարցնել Մարգարիտայի առողջութեան մասին և այն ժամանակ...

Խոստովանել անձամբ—կամ թող տալ ամուսնուն կասկածել և քայլ առ քայլ մօտենալ ցաւալի իրականութեան պարզաբանութեանը՝ կնոջ դա-

ւաճանութեան—զանազանութիւնը շատ և շատ մեծ է, և տիկ. Մարգարիտան հասկանում էր, որ հէնց մարդու առաջին ակնարկութեան կամ նրա հարցմունքի ժամանակ, նա չէ կարող դիմանալ և բոլորը, բոլորը կասէ նրան:

—Այ, այդ դու ես, սիրելի Մարգարիտա, քնչ լաւ եղաւ, որ մենք պատահեցանք միմեանց... Այսօր ինձ մօտ եկաւ մեր վաղեմի բարեկամ Մակար Սարգսեանը,—կարծեմ որ դու նրան ճանաչումես,—իմ երկրացին և դասարանական ընկերս. նա եկած է այստեղ մի քանի օրով, և ասաց, որ ժամի չորսին կրգայ մեզ մօտ... ուզում է քեզ հետ տեսնել... ես ցանկացայ մի լաւ հիւրասիրել և գնացի մրգեղէնի խանութը, իսկ այնտեղից էլ քեզ մօտ-ակազիմիան, բաց... Այդ ժամանակ դուռը բացւեցաւ և Գերասիմ Յովսէփեանը անցնելով կնոջից առաջ՝ ներս մտաւ նախատեսեակը և սկսեց հանել վերարկուն:— Գոյ մի որեիցէ մարդ մեզ մօտ, հարցրեց նա ազխանին և մօտենալով հայելուն, սանրեց մօրուսը:

—Պ. Սարգսեանը կէս ժամից աւել է, ինչ որ պատում է ձեզ...

—Գէհ, լաւ, լաւ, վառեցէք լամպաները թէ դահլիճում և թէ՛ սեղանատանը, թէյն էլ շուտով... դու, Մարգարիտա, կարգադրիր այնտեղ... Գէհ, քնչու չես հանւում, զարմացմամբ հարցրեց ամուսինը, նկատելով, որ կինը հէնց այն սլես է կանգ-

նած, որպէս ներս էր մտել, չընայած աղախնի լռիկ ջանքերին, որը օգնում էր հանւել ախրահուն:

—Դու դասախօսութիւններին լսելու համար սկսեցիր... ես կամենում էի... Դու այնտեղ էիր... մոլորածի նման սկսեց Մարգարիտան և յետոյ, իբր թէ ուշքի գալով, արագ-արագ հանեց վերնագրեասը:

—Այդ մասին յետոյ, Մարգարիտա... ինձ առհասարակ հարկաւոր է լուրջ խօսակցել քեզ հետ մի շատ կարևոր և գոյութիւն ունեցող, թէ ինձ համար և թէ քեզ՝ մեզ երկուսիս համար,—շիտկեց Յովսէփեանը,—համզամանքի առթիւ: Մի վրդովիր, գործը դեռ կարելի է ուղղել... եթէ որ դու ցանկանաս հանգստացնել ինձ, նկատեց Գերասիմ Յովսէփեանը խորհուրդաւոր եղանակով և Մարգարիտան նկատեց որ նա գունատուեց և նրա թուխ, խիթ ունքերի մէջ կնճիռներ էին կազմւել: «Հէնց այդպէս էլ է, սկսում է: Նա ամէն ինչ իմացել է, կամ գուցէ կասկածում է... սակայն երևում է, որ արդէն տանջւում է և չարչարւում, մրմնջում էր Մարգարիտան և անհանգստութեամբ նայում մարդու երեսին:

—Գէհ, դեռ շուտով, Մարգարիտա, կարգադրիր և շուտ վերադարձիր մեզ մօտ... Մակարը հետաքրքիր անձնաւորութիւն է, և ակնյայտնի երևում է, որ կամենում է քեզ հետ խօսել... Ես այնպէս ուրախ եմ նրա գալուն, և խօսքերը դեռ

չըվերջացրած պ. Յովսէփեանը ներս մտաւ առանձնասենեակը, որտեղից շուտով լսելի եղաւ երկու սրտակից բարեկամների ուրախալի խօսակցութիւնը: Մարգարիտան զեռ մի վայրկեան ևս կանգ առաւ դահլիճում, ականջ դրեց նրանց խօսակցութեանը և յետոյ գնաց սեղանատունը:

Սրագաշարժ և ճարպիկ աղախինը, տիրուհու հսկողութեան ներքոյ, ամէնայն արագութեամբ պատրաստեց թէյը: Մարգարիտան նստելով փափուկ բազկաթոռի վրայ՝ մեքենայօրէն հետևում էր ուտելիզէնների պատրաստութեանը, և լաճախակի, երբ աղախինը դիմում էր նրան միտրեւէ հարցմունքով, նա, որպէս թէ; զարթնում էր խոր մտածմունքներից, և առաջին րոպէյում հազիւ էր կարողանում կշռագատել, թէ ինչ են ուզում նրանից, ինչ պէտք է նա պատասխանի:

— Պատրաստ է, տիրուհի, կը հրամայէք ներս բերել հեշտաեռը, թէ սկզբից այստեղ հրաւիրել պարոններին, հարցրեց աղախինը, կանգնելով Մարգարիտայի հանդէպ, սպասում էր նրա հրամանին: — Ախ, Աստուած, իմ, այդ ինչ պատահեց, գուր տկար էք, յանկարծ բացականչեց աղախինը, նկատելով, որ իր տիրուհին գունատեց և նրա զուլը թուլացած յետ ընկաւ բազկաթոռի մօտը: — Չնորհիւ սպիրտի, ջրի և աղախնի գործ գրած ջանքերին՝ Մարգարիտան շատ շուտով սւշքի եկաւ,

բանալով սև-մարդակուլ աչերը և տեսնելով աղախինին՝ հանգստացաւ, որ նա ո՛չ ոքի, մանաւանդ ամուսնուն, օգնութեան չէ կանչել:

— Ոչինչ, ես այժմ լաւ եմ զգում ինձ... շնորհակալ եմ քեզանից, իմ սիրելի, թէ ինչուց առաջացաւ այդպիսի մի թուլութիւն, չեմ հասկանում... Սակայն այժմ ամէն ինչ անցած է... բեր հեշտահեռը և հրաւիրիր պարոններին այստեղ... գնալ նրանց մօտ՝ վախենում եմ... աւելացրեց Մարգարիտան թոյլ և խուլ ձայնով, կարծես, ինքն իրեն հետ էր խօսում: Նրան ընդգրկեց նիարդալին սարսուռը և չարամիտ կասկածը, որը մի քանի անգամ էր ինչ անցնում էր նրա գլխովը, ձգելով նրան երբեմն ջերմութեան մէջ, երբեմն՝ սառսուռի, որը լցնում էր նրա ամբողջ հոգեկան բովանդակութիւնը կամ ամօթով, կամ լանցաւոր ուրախութեամբ... Յանկարծ նա կենդանացաւ, զգաց, իսկութեամբ հասկացաւ, որ նրա կեանքի երազները կատարուեցին, որ այն, ինչ որ ազահօրէն սպասում էր նա իր ամուսնական երկու տարւայ ընթացքում — կատարւած է... նա շուտով մայր կոչմանը արժանի կրլինի...

— Սպողւած, իմ, Աստուած, գուրս թառ նրա գունատւած ջրթունքներից խորին հառաչանքով, և արտասուների կաթիլները, որպէս գոհար, փայլեցին նրա թխազոյն աչերում: Մարգարիտայի առջև ներկայացաւ իր ամարդութեան, դաւաճա-

նութեան պատկերը բոլոր այլանդակութեամբ, այն, որին արժանացրեր իր հրապուրանքը, իր որոնած իդէալը, իր ձգտումը սիրել և լինել սիրելի...

Նա—մայր է, իսկ նրա ամուսինը՝ ազնիւ, անկեղծ, սիրող ամուսինը, որի պատուաւոր անունը նա կրում է, որի հետ ընդմիշտ կապւած է,—նա—հայր չէ... Նա՛ Մարգարիտան հրապուրեց, մոռացաւ և ոտնակոխ արաւ իր կանացի պարտականութիւնները և ինչպէս ճակատագիրը խստութեամբ պատժեց նրան:

Նրա ապագայ որդուն հայր լինելու է նա, որի համար Մարգարիտայի սէրը, բուռն զգացմունքը, նրա հպատակութիւնը և մտերմութիւնը կազմում էին միայն «սիրոյ պօեզիան»:

Միթէ Օհանեսանի հետ այսօրւայ խօսակցութիւնը ցոյց չըտուեց Մարգարիտային, թէ ինչպէս է վերաբերվում դէպի ինքն, ինչպէս է վերաբերվում, նայում իր անձնական յարաբերութիւններին դէպի շահիլ կինը:

Զեռք բերել նրան գաղտնագողի, լրբաբար, աւագակային միջոցներով ստիպել նրան ստախօսել, խաբել և կեղծաւորել—էր «Սիրոյ Պօեզիան», իսկ կանգնել նրա հետ հաւասար մի շաւղի վրայ, երբ ալ պաշտպան և բարեկամ, կապել իրեն բաղդը, ապաղան նրա հետ, դառնալ պատասխանատու անձն իր անցկացրած... բոպէներին,—այդ անուանում էր «սիրոյ պրօզա»... Սակայն տիկ. Մարգարիտան զիտէր և մի ուրիշ ա-

նուն յատկացնել այդպիսի երկչոտ յարաբերութեանը, մի անուն, աւելի յարմար...

Բայց ինչ անէր նա—տուէր ամէնը մարդուն, խոստովանւէր, երևան հանէր Օհանեսանին, չէ, նա չէր կարող այդպիսի բան անել, մանաւանդ ներկայ ճակատագրական ժամում, երբ վճռողականօրէն որոշել էր միանգամայն խզել իր խայտառակ կապը և յաղթել սիրոյ զգացմունքին, որը տածում էր ամարդ Օհանեսանին: Թողնէր ամէն ինչ ըստ առաջնոյն, հաւատացնէր մարդուն, որ նրա յոյսը կատարւած է, որ նա ճակատագիրը նրա համար պարզեց ինչպէս թիւն և նրանց կապը օրհնեց երկինքը... Տեսնէր երջանկոյցած հօր-բաղդաւորութիւնը և հպարտութիւնը, ներմուծէր նրա ընտանիքի մէջ օտար երեխան այդ ըուպէական ախտաբարձք հրապուրանքից և սխալմունքից առաջնացած երեխան, տեսնէր թէ՛ ինչպէս կը վերաբերուի դէպի այդ նորածին, թշւառ և անբաղդ մանուկը, կը փախկայ, կը սիրէ նրան, որպէս հարագատ որդուն, իսկ ինքը օրէցօր սարսափի, որպէս յանցաւոր, սպասելով, որ աւազի վրայ կառուցած այդ շէնքը շուտով կը տապալւի և կը թաղի իր փլատակների տակ ո՛չ միայն նրան՝ յանցաւորին, բայց և անմեղ, անպաշտպան երախային: Ոչ, նա չի կարող այդպէս լրբաբար սուտ ասել, նա բոլորը, այն, բոլորը կ'ասէ մարդուն, կը բանայ նրայ առջև անբողջութեամբ իր հոգին ու սիրտը, կը բացատրէ իր քայլ առ քայլ գործած բոլոր մեղքը

և կրտայ լիագորութիւն հաւատարիմ, սակայն ջրատար ամուսնուն՝ դատասպարտել կամ ներել...

—Մարգօ, սիրելիս, քնչ է պատահել քեզ: Ինձ աղախինն ասաց, որ դու քեզ վատ ես զգում... քնչից է այդ, ասաց Յովսէփեանը՝ հոգատարութեամբ թէքուելով դէպի կինը, սեղմեց կրծքին և սիրողաբար համբուրեց ձեռքը:—Ինչպէս դու գու՛նատուել ես, երևի մըսել ես, բայց և ահա, այժմ բոլորովին բորբոքեցիր, Աստուած իմ, գուցէ ջերմում ես: Չուղարկեմ բժշկի:

—Մչ, ոչ, հանգստացիր բարեկամ, հաւատարիմ ընկեր: Գատարկ բան է, ամէն ինչ կ'անցնի շուտով... հասարակ թուրութիւն է... իսկ սուր է պ. Մակարը, հարցրեց Մարգարիտան, շտապելով փոխել խօսակցութիւնը:

Իե՛ռ պատասխան չըստացած՝ Մարգարիտան շտապեց պ. Մակար Սարգսեանի մօտ, որը մի բարձրահասակ, նիհար, հանգած աչքերով, մօտ քառասուն տարեկան տղամարդ էր, որ կանգնած էր սեղանատան դռան մօտ:

—Մ, բարև ձեզ, պ. Մակար, ուրախ ժպտով ողջունեց Մարգարիտան, ամուր սեղմելով թանգագին հիւրի ձեռքը.— շնորհ արեցէք նստել... հազիւ բարեհաճեցիք մեզ մօտ գալ... Մենք միշտ լիշում ենք ձեզ, բայց վերջին ժամանակներս ձեր գաւառական համայնքը, շնորհիւ իր ժրաջան գործիչների, շատ ստեղ յայտարարում է իր մասին: Ինչպէս

երևում է, դուք, ի վուր տեղ չէք ընտրել այնտեղ գործունէութեան ասպարէզ...

—Ինչպէս ուրախ եմ, տիկին, որ դուք, թէև լրագրութեամբ, բայց և այնպէս, հետաքրքրում էք դաւառական կեանքով: Մեզ գաւառական աղուէսներին այնքան ակորթելի է, երբ լսում ենք որ այստեղ մտածում են մեզ վրայ, հետևում են մեր գործունէութեանը, համարեան, մենք բոլորովին անջատուած ենք կենդանի մարդկանցից, չըզիտենք թէ՛ ինչպէս են ապրում այստեղ, քնչն է հերթական հարցը, քնչումն է կայանում առերես խնդիրը... Սակայն ձեզանում մի բան հասկանալի է, ձեզանում ամէն բան միայն ձևականութիւն է, և այդ ձևականութիւնը փոփոխում է համարեան, ամէն մի ժամում. վճռում էք մի կարևոր հարց, նրան սրաշտօնապէս յայտարարում էք, իսկ յետոյ... յետոյ մի ժամ չանցած այդ միևնույն վճիռը, միևնույն հարցի վերաբերմամբ փոխում էք և նորից «ոչ յօրինակ այլոց» յայտարարում... Իսկ մեզանում, ընդհակառակը, բռնեցիր մի բանի պոչից, մինչև վերջը ձգիր ու ձգիր, վերջ չըկալ նրան.— կամ ժողովրդական կրթական գործն է, կամ հիւանդանոցներ բանալու խնդիրն է, կամ փոխադարձ ընկերական օգնութիւնն է... կամ տեղի են ունենում մեզանում զանազան անբաղդութիւններ՝ հացի պակասութիւն, թանգութիւն, եկեղեցական և ուսումնարանական դրամների կլանումն, մի խօսքով... «գորն ասեմ կամ գորն խոստո-

վանեմ, զի անթիւ են... կարգալով մեր գաւառա-
կան գործերը, ակամայ հետաքրքրվում ես նրան-
ցով և ցաւում, բայց չկայ այստեղ, որտեղ մեր բո-
լորիս աչքերն են կենդրոնացած, գոնէ մի փոխա-
րինող միսիթարութիւն, որով կարելի լինէր միսի-
թարւիլ և մոռացութեան տար մերը: Այստեղ ևս՝
Լուիւ, Խառփութիւն, իրար տակ փորել, ընդհանուր
գործին վնասել, ազգային հիմնարկութիւնների փո-
ղերը կլանել, հասարակութեան հողերը, այգիտե-
ղերը սեփականել և իր եզբօրը կամ մօտիկ ազգակա-
նին յատկացնել, կլլել, կողոպտել սրան—նրան,
արասաութք աչքերին՝ հարիւրաւոր վերստեր եկած
գիւղացու վերայ սջիլ անգամ չըթողնել և այդպէս
ճանապարհ դնել—ահա և ալստեղի կեանքը, ճիշդ
չէ, Գերասիմ: Սեզանում, գոնէ այն չէ, ինչ որ ձե-
զանում է, այդ բոլորից գատ, դուք ներկայացնում
էք մի պատկեր.—բոլորդ էլ, եթէ այսպէս կարելի
է ասել, «թղթէ քու մկներ» էք, աւելացրեց նո-
րակի հիւրը, կատակով մատնանիշ անելով Յովսէփ-
եանի վրայ,—իրենց սենեակներում նստած մեծ-մեծ
պրօէկաներ են կազմում, ոչնչացնում են չարը լոկ
խօսքով, իսկ դժբաղդաբար՝ գործով ոչինչ չըզիտեն՝
թէ ժողովուրդը ինչ պահանջ ունի, գուցէ և զի-
տեն, բայց փորապաշտութիւնը և... արգելք են
լինում նրանց, նրանց, որոնք...

—Ե՛հ, բաւական է, որքան մեզ խայտառա-
կեցիր, ընդմիջեց նրան պ. Յովսէփեանը,—նստիր,

իսկ բարի տանտիկինը կըհիւրասիրէ մեզ թէյով:

Պ. Սարգսեանը չ'ընդիմախօսեց:

Երկու բարեկամների խօսակցութիւնը քանի
գնում, այնքան կենդանութիւն էր ստանում:

Պ. Սարգսեանը ողևորւած պատմում էր իր
գործունէութիւնը, և ծիծաղում էր իր անփորձա-
կանութեան վրայ՝ թէ ինչպէս ծանր էր սկզբներում,
թէ ինչպէս նրան վիճակեց ընկնել երկնքից-երկիր
և համոզել, որ իր յոյսերի տասներորդ մասն է
միայն կատարւած:

—Գաւառական գործը՝ ընդհանուր գործ չէ,
ասաց Սարգսեանը: Որքան այդ տարօրինակ չէ, բայց
և իսկապէս, երբ մօտենում ես ստուգելու—այդ՝
այդպէս է: Գոնէ մեզանում, մեր երկրում համայնքը
չիշեցնում է «խնցղետնի, կարապի և գայլաձկան»
առակը... Ի՛ցաւ սրտի, կարապներ շատ քիչ կան,
և շատերի թիւերն էլ կամ կտրած են և կամ կա-
պած: Սակայն դորա փոխարէն խեցղետիները և
ձկները երջանիկ կեանք են վարում, բառիս բուն
նշանակութեամբ: Ամէն մի մարդ իրեն համար է
գործում ու մտածում—ահա այդ է ժամանակակից
գործիչների նշանաբանը: Եւ դուք, ես կարծում եմ,
որ լրագրութիւնից կըզիտենանք, որ մեզանում,
առհասարկ, գաւառական բոլոր գործերը գտնւում
են անմիսիթար և արտասուելի դրութեան մէջ և
տառն այլուող հերթական հարցերից ո՛չ մէկը չէ՝ ի
կատար ածւում: Եւ եթէ պատահում է, որ մի

բան լխախալի զլուխն են ձգում՝ այդ այն ժամանակ է լինում, երբ այդ հարցերը ոչ մի օգուտ չեն կարող տալ համայնքին, իսկ երբ մի մազաչափ բան վնասում է այդ գործիչների շահերը—իրար միս են ծամում: Ո՛չ, դեռ ևս շատ ծանր է մեր հանարակական գործիչների համար. պաշտպանութիւն—ոչ մի տեղից, ամեն տեղից թշնամիներ, որոնք ազահութեամբ դիտում են ձեր իւրաքանչիւր անզգոյշ քայլը, խօսքը, պատրաստ են սաստկութեամբ արծարծել այդ ձեր ներելի վարմունքը, խօսքը:

—Իսկ քնչպէս է կառավարւում ձեր ուսումնարանը, ընդմիջեց նրան Մարգարիտան:

—Մ. խր, հո՛, ձեր տիկինը ինքն էր սովորեցնում պուճուրիկներին: Ես յիշում եմ, թէ ի՛նչեր չէր նա երազում իր աշակերտների համար... Մ. խ, ներեցէք, ՚ի սէր Աստուծոյ, բոլորովին մոռացայ հարցնել, թէ քնչպէս է ապրում տիկին Աշխէնը:

—Ես է՛լ լաւ բարեկամ եմ, յանկարծակի վրաբերեց Գերասիմ Յովսէփեանը, դատարկ ու բարակ խօսակցեցինք, —բայց ոչ դու, Մարգարիտա՛, և ոչ էլ ես չըմտաբերեցինք տիկին Աշխէնին... Բնչ, նա առողջ է, հարցրեց պ. Յովսէփեանը, չընայելով Մարգսեանի դէմքին անգամ, որովհետև նրա բոլոր ուշքն ու միտքը կենտրոնացած էր «Ազգայնովսկի» պանրի կտրման մէջ:

—Տիկին Աշխէն, տիկին Աշխէն... խուլ ձայ-

նով շըշնչած Սարգսեանը.—և մի՞թէ դուք, ոչինչ չըգիտէք, ես կարծեցի, որ դուք դիտմամբ չէք հարցնում նրա մասին, երկնչելով՝ մի գուցէ նորոգէք սրտիս խոցերը... ա՛խ, Աշխէն, Աշխէն...

Այդպէս. ուրե՛մն դեռ ձեզ տեղեկութիւն չէ տւած, որ ես—«ածիկ որբ և այլի՛, եմ *), որ իմ կեանքս կիսակտոր է եղած, որ գտնւում եմ այնպիսի դրութեան մէջ, որ պէտք է թողնեմ և՛ ծառայութիւնս, ի՛՛ արիւնավաստակ վանդակս՝ օթեանս... Լաւ է, որ ես ինքս պատմեմ իմ ցաւալի դրաման...

—Պ. Մակար, ընդհատեց նրան Մարգարիտան գողգոջիւն ձայնով.—մի պատմէք, այդ բոլորը, ինչպէս երևում է, արէկոծում է ձեզ... Ի՛նչք, ՚ի հարկէ, հաւատում էք, որ եթէ մենք զիտենայինք մի որևէ բան, այն ժամանակ չէինք լիշեցնել ձեզ՝ ձեր անբաղգութիւնը:

—Բաւական է, բաւական, իմ յարգելի տիրուհի, մի խղճաք իմ վրայ, լաւ է և թեթեւութիւն մարդու սրտի համար արտայայտել իր խորին վիշտը, թեթեւութիւն է տանջանքի համար կարեկցութիւն վաստակել, քան թէ՛ լսել և թագցնել իր մէջ ամեն բան այնպէս, ինչպէս ես պէտք է թագցնէի, զի-

*) «Ածիկ—որբեայրի» ժողովրդական բառարով կոչւում է այն մարդը, որը չունի ոչ կին, ոչ որդի, կամ ունի որդի, իսկ կինը հեռացած է նրանից և ապրում է ուրիշի հետ:

տենալով, որ մեր գաւառական քաղաքում ինձ ծաղրու ծանակ կը գարձնեն, կը գարձնեն կնակաւատ, թէև Աշխէնը—բոլորովին ազնիւ կին է. նա ո՛չ մի բոսէ չէ խարել ինձ:

Մի մտածէք, թանգազին բարեկամներ, որ դուք, իբր թէ՛ ձեր անզգոյշ խօսակցութեամբ՝ Աշխէնի առողջութեան մասին, հեղեղեցիք ինձ այդ դառն լիշտութեամբ, շարունակեց Սարգսեանը, զընելով թեքերը սեղանի վրայ և վայր թողնելով զըլուխը՝ ասաց. — ո՛չ: Ես եկած եմ ձեզ մօտ, հէնց իսկ այդ նպատակով՝ պատմել ձեզ երկուսիդ... աւելի քեզ մօտ, յարգելի Մարգարիտո՛ս, միայն քեզ մօտ, որպէսզի խնդրեմ քեզ, որ օգնես և թեթեւացնես իմ վշտերը, կանգնեցնես ինձ նորից այն պատուանգանի վրայ, որից... Դո՛ւ, եղած ես ինձ համար միշտ բարի, հոգեակս, օգնիր և այժմս էլ...

— Ինչ որ կարող եմ անել, սր. Մակար, ինչ ասել կուզէ, որ ուրախութեամբ կանեմ, պատասխանեց Մարգարիտան զգացած այն խորին վշտով, որն ողբալի կերպով հնչուում էր Սարգսեանի ձայնի մէջ և արտափայլում նրա դալկացած երեսի վրայ:

— Դուք կարող էք, կարող էք... զանէ իմ բոլոր յոյսերը և ապաւենը ձեզ վերայ է: Մօտ օրերս, երբ ես տեղեկացայ մի քանի մանրամասնութիւններ Աշխէնի ներկայ կեանքից՝ ընկայ լուսահատութեան մէջ: Ես մօտկացած էի անձնասպանութեան... Եւ դիտէք, թէ ինչը պատճառ եղաւ փոխել որոշած

վճիռս—Դուք: Սասցի ինքն ինձ. — ահա կին, որ ունի սիրտ և խելք, խիղճ և հոգի—նա կը հասկանայ, կը մտնէ իմ զրութեան մէջ և ինձ կ'օգնէ... Աշխէնը ապրում է այստեղ:

— Այստեղ, միաբերան հարցրին նրա բարեկամները: Նրանց ալշեցրեց այն, որ ո՛չ մի անգամ չեն պատահած Աշխէնին ո՛չ փողոցում, ո՛չ հասարակութեան մէջ, և ո՛չ մի տեղ, թէև երկու բարեկամների շրջանն էլ միևնոյնն էր:

— Այո՛, այստեղ է, կրկնեց զժբաղը Սարգսեանը. — ահա կէս տարի է, ինչ որ նա հեռացել է մեր քաղաքից: Որպէսզի պահպանած լինէր արտաքին կեղծ պատշաճը և համեստութիւնը՝ նա ասաց, որ չէ կարողանում տանել մեր երկրի ցուրտ կլիման, որ հարկաւոր է վերականգնել թոյլ ուժերը և պէտք է գնալ... Օ՛, և ճշմարիտ, թշուառ այնպէս հալ ու մաշ եղաւ կարճ ժամանակում, շնորհիւ իր հոգեկան աշխարհի կոիւների, որ աւելի նմանուում էր մի կմախքի, քան՝ այն կենդանի աժխոյժ, ուրախ կնոջն, որ դու տեսել ես, սրտակից բարեկամ...

— Ինչ է պատահած, ճշմարիտ չեմ հասկանում, հարցրեց սր. Յովսէփեանը:

Սովորական հին պատմութիւնը, բայց միայն կատարած, կամ լաւ է ասել, ներկայացւած նոր ներդաշնակութեամբ. — Աշխէնը սիրեց մեր գաւառական բժշկին՝ մի ջահիլ երիտասարդի, որը մի

քանի որ էր, ինչ հեռացել էր ուսումնարանի նստա-
րանից: Սկզբից Աշխէնին զարմացրեց նրա մանկա-
կան, մաքուր, էներգիական ձգտումը՝ օգնել փոքր
եղբորը—գիւղացուն:

Այնտեղ, առհասարակ ամէն գաւառական քա-
ղաքում այդպիսի աձնաւորութիւնները շուտով են
աչքի ընկնում և դիրք վաստակում, թէկուզ նը-
րանք լինէին աւելի վատ, քան... Այդ ամէնալար-
մար հոդն էր մօտկանալու երկու հասարակական
գործիչներին: Հիւանդանոց, ուսումնարան, ընթեր-
ցարան, անվերջ խօսակցութիւն, ՚ի հարկէ, այդ-
պիսով պետք է ծնէին նրանց մէջ փոխադարձ հա-
մակրութիւն, յարգանք, սէր... փոխադարձ տար-
փանք...

Աշխէնն ինձ յարգում և սիրում էր, ես այդ
քաջ գիտեմ և հաւատում եմ գրան անպայման:
Ես մի գիրք էի նրա համար վաղուց կարդացած,
իսկ նրա խելքը, նրա տպաւորիչ բնաւորութիւնը
պահանջում էին նոր, թարմ կերակուր—նոր զգաց-
մունքներ... Բժիշկ Վարդեանի հոգեկան թարմու-
թիւնը, եռուն երիտասարդութիւնը, բոցակէզ հո-
գին հրապուրեցին Աշխէնին...

Եթէ մենք որդիք ունենայինք, հաւատացած եմ,
վտանգը կըհանգչէր, ահարկու փոթորիկը կ'անցնէր
հեռուից, որ զարհուրելի կերպով Աշխէնին մօտեց-
րեց պ. Վարդեանին և... կործանեց, և նրան, և
ինձ...



Սարգսեանի ձայնը անգորացած կտրւեց: Նա՛
խորը, ծանր հառաչեց և, խմելով միանգամից պա-
ղած թէյը՝ շարունակեց.— բժիշկ Վարդեանը հիւան-
դացաւ տենդով և ընկաւ անկողին: Միայնակ, ա-
ռանց մի որևէ յարմարութեան, մինչև անգամ
կարգին հոգատարութեան, կըգնար իր պապերի մօտ,
բայց ես՝ խորհուրդակցելով քաղաքական բժշկի հետ,
վճռեցի տեղափոխել ինձ մօտ, հետևապէս և Աշ-
խէնի: Աշխէնը եռանդով սկսեց խնամել, հօգս տա-
նել: Ետտ անգամ տենդային զառանցանքների մէջ
բժիշկը կանչում էր նրան, դիմում նրան փաղաք-
շական խօսքերով, արտայայտում իր սէրը այն աս-
տիճանի չափազանցրած, որ աստուածացնում էր
Աշխէնին: Աշխէնը ինձ ասաց, որ այդ անգիտակ-
ցական խոստովանութիւնը ծնեցրեց իր հոգու մէջ
մի ջերմ հակում դէպի բժիշկը, իսկ նա, երբ բո-
լորովին առողջացաւ՝ հասկացաւ որ իր առողջու-
թեամբ բացառապէս պարտական է Աշխէնին և
սիրեց նրան, որպէս իւր կենսատուին, իսկ Աշխէնն
էլ սիրեց, որպէս երախտագէտ եղբոր, մի մարդու,
որին պարզաւէլ է վերստին կեանք: Թէ ինչպէս
նրանց մէջ տեղի ունեցաւ բացատրութիւնը, ես
չըգիտեմ. իմ ուժերս անգոր դունեցին մինչև վերջը
լսելու Աշխէնի այդ ազնիւ, բայց անխիղճ և անողորմ
պատմութիւնը... Նա, ասաց Վարդեանին, որ կըբա-
ժանւի ինձնից և կը հեռանայ, նախապէս հաղոր-
դելով ինձ բոլոր ճշմարտութիւնը... և հաղորդեց:

Տիրեց խորին լուսթիւն:

Մարգարիտան նստած էր լուռ ու մունջ, վըշտացած և գունատուած, երբեմն արտայայտելով իր հոգեկան լուզմունքը մռայլ գէմքի վրայ: Նրա առջև նորից պատկերացաւ իր միւսնոյն ցաւալի պատմութիւնը, սակայն աւելի վատ և սպանեցուցիչ գոյներով, քան թէ՛ էր Աշխէնինը: Նրան—սիրեցին, նա հեռանալով մի ամիս, գոնէ գիտէր, որ ունի ամուր պատասպարան—հաւատ սիրեցեալ մարդու մէջ, լուսալի ամի—պայծառ ապագայ... Վարդեանը չըմտածեց, չըվախեցաւ... Համարձակօրէն մեկնեց իւր ձեռքը մի կնոջ, որն ինեւց նրա վրայ, շարքտելով իրենից հեռու իր հարազատ, օրինաւոր ընտանիքի տէրին, որին ինքն իր յօժարութեամբ, և ոչ բռնութեամբ, անձնատուր էր եղել...

—Դուք, գուցէ ինձ համարէք ամէնամանբարոյական մարդ, նորից շարունակեց Սարգսեանը,—սակայն ես երկնոր, երկնոր մտածեցի, և գիտէք ինչ եզրակացութեան եկայ. այն—որ նախկին կանայք վարվումէին աւելի խելացի, տրամաբանօրէն և աւելի խղճով: Մեր նախամայրերը և նախաքորերը եթէ փոխարինում էին իրենց ամուսիններին, գոնէ ծածկումէին այդ Փակտերը: Հրապուրանքը, որպէս մենք այդ տեսնումենք հարիւրաւոր օրինակներով, շուտով կ'անցնի (սիրահարներին միատեղ կեանքը չէ՛ որ սրաթուիչ կերպով է սթափեցնում նրանց, շնորհիւ այնպիսի պայմաններին, որոնք թուլացնումեն

բորբոքած կիրքը) և ընտանեկան բազմաւորութիւնը կարող է նորից, նոր ուժով յարութիւն առնել: Բայց այժմ այդ անիծեալ, անխիղճ ազնուութիւնը, այդ ուղղագիծ յարաբերութիւնը... Աշխէնն ինձ ասաց, որ սիրահարած է Վարդեանի վրայ, նրա, որին ես նորից կեանք տւեցի, որ գնում է, բաժանուում է ինձնից... Ես, որպէս ժամանակակից ամուսին, կանգնած իմ գիրքի բարձրութեան վրայ, չուզեցայ վրէժխնդիր լինել իմ երջանկացած հակառակօրդից, չուզեանալով խանգարել Աշխէնին կազմելու իր կեանքը իր ճաշակին համաձայն: Եւ մինչև անգամ տաջարկեցի ապահարգան, սակայն, բանից երևած, որ բժիշկը—հակառակէ պսակին: Այն ժամանակ ես արեցի ամեն բան, ինչ որ միայն կախածէր ինձնից. տարածեցի, որ կինս տկարէ, որ բժիշկները խորհուրդ են տալիս նրան ապրել տաք կլիմայում, տւեցի նրան առանձին անցաղիր, ապահովացրի փողով, որպէս զի նա դրամական կախում չունենայ Վարդեանից, և ճանապարհ գրեցի... Երբ նա գնաց և ես մնացի միայնակ դատարկացած տնումս, կարծեցի որ՝ կըխելադարւիմ... Կնոջս իւրաքանչիւր խօսքը, իւրաքանչիւր շարժումը լիշեցնում էր ինձ իմ ջախջախած երջանկութիւնը... Իմ վարքի մէջ ես դառնումէի շատ եղանակներ, որոնց շնորհիւ նա կարողէր ինձնից անջատուի, դադարել յարգելուց և սիրելուց...

Աշխէնն ինձ սիրումէր, չէր դադարում վերաբեր-

Handwritten note: Սարգսեանը

ւել ինձ իր ամբողջ Հոգու լաւութեամբ... Բայց նրա վրայ, որպէս յանկարծական Հողմ, թուաւ բորբոքած տարփանքը... Եւ, Աստուած իմ, ինչ տեսակ մտածմունքներ չառաջացան զլիսումս: Ես մտածեցի, որ աւելի լաւ կըլինէր անձնատուր լինել այդ կըքին, եթէ չըկարողանար յաղթել, բայց գոնէ, ի սէր Աստուծոյ, քարուքանդ չ'անէր ընտանեկան բաղգաւորութիւնը և օջախը, չըփչացնէր թէ իր կեանքը և թէ իմ, այլ և նրա՝ Վարդեանի... Առաջին նամակները, որ ստացայ Սշխէնից, շնչումէին բաղգաւորութեամբ... Նրա ազնուութիւնը վեր էր իր սահմանից. նա համոզումէր ինձ՝ չըտխրել,—գրումէր որ՝ անբացատրելի, աննկարագրելի կերպով բաղգաւոր է... բայց երբորդ ամսում, համարեան ընդհատեց նամակագրութիւնը և նրանցից վերջինն ինձ ցաւալի կասկածների առիթ պատճառեց: Ես յանձնարարեցի այտողի իմ բարեկամներից մէկնումէկին, որ մանրամասն իմանար, թէ ինչպէս է աղբում Սշխէնը, և բանից երևաց, որ Սիրոյ Պօէզեան՝ կորել, անյայտացել է արգէն:

Երէկ ես անձամբ գնացի նրա մօտ, բայց ի ցաւ իմ խոցոտւած սրտիս—նա տանը չէր: Նա ապրում է մենակ, մի ցածր, խոնար սենեակում և ամբողջ օրերը, որպէս ասում են, նստած է լւացքի տաշտի մօտին: Պ. բժիշկը երբեմն—երբեմն այցելում է, և անբնական չէր լինի, եթէ նա, ըստ իրենց համալսարանական անպայման ազնու-

թեան՝ առջև խոնարհւած՝ ասէր նրան.— Երեք ամիս առաջ ես անսահման սիրով էի սիրում քեզ, իսկ այժմ—էհ, այնպէս էլի... սակայն մի բաժանւիր ինձնից, սրովհետև լաւ է ունենալ մօտիկ մարդ, քան թէ՝ մնալ մենակ: Եւ իրաւ. չէ՞ որ ներկայ ժամանակաւ բարոյական դաստիարակութիւնը այդպէս է պահանջում:

—Ինչ կարողեմ ես անել, խուլ ձայնով հարցրեց Մարգարիտան, կարեկցութեամբ նայելով Սարգսեանի խռովայնոց դէմքին: Այդ երկար պատմութիւնը, ակներև կերպով, տանջեց Սարգսեանին. նրա սև աչերը, կամակորութեամբ ուղղած դէպի անկիւնը, մի տեսակ վայրենական գազանութեամբ փայլատակում էին, գունատ այտերը շողաղել էին կարմրագոյն ծիրանիով, և միայն շրթունքները սեղմւած արտայայտում էին այդ մարդու ներքին ցաւն ու վիշտը:

—Ինձ թւում է, անգին Մարգարիտա, որ դու լաւ կ'անէիր, եթէ հէնց վաղը կանուխ գնայիր Սշխէնի մօտ, ասաց Յովսէփեանը իր բարեկամի փոխարէն, իբրև պատասխան Սշխէնի հարցին: Կանանց աւելի հեշտ է միմեանց հետ խօսել, պարզել միմեանց իրենց սրտերը և արտայայտել իրենց հայեացքները:

Ինչ մի այնպիսի խելամիտ, այնպիսի զուլած կին ես, Մարգարիտա, որ կարող ես լըջօրէն ազդել նրա վրայ, կարող ես կործանել, ջախջախել նրա

ցնորական համոզմունքները, համոզել նրան՝ վերագառնալ ամուսնու գիրկը...

— Այն, այն, հարազատ բարեկամ, սիրելիս, գնացէք նրա մօտ, ո՛հ, Աշխէն, Աշխէն... Ասացէք, համոզեցէք նրան վերագառնալ... ո՛հ, մինչև անգամ չըվերագառնալ, կարելի է այդ նրան ստորութիւն կ'երևայ... Թող միայն ասէ, որ համաձայն է ապրել ինձ հետ մի յարկի տակ և կըզնանք մի ուրիշ նահանգ, ուր որ նա կըցանկանայ, և ես համբերութեամբ և խոնարհութեամբ կըսպասեմ մինչև որ՝ նրա հրապուրանքը բոլորովին կ'անցնի, մինչև որ նա կըտեսնի իմ մէջ նորից մերձաւոր բարեկամութիւն: Եթէ որ այդ նրա համոզմամբ անկարելի է, մենք կ'ապրենք որպէս բարեկամներ, ծառայելով միայն ընդհանուր գործին... Ասացէք նրան... Բայց ես գիտեմ, զուք ինքներդ գիտէք, թէ ինչ է հարկաւոր ասել նրան, ինչպէս ազգել նրա նհարդերին, փոխել տրամադրութիւնը: Հաւատարիմ բարեկամ, օգնեցէք... Փրկեցէք նրան և ինձ... Ի՛նչք— կարողէք, գու՛ր ունիք իրաւունք նրա հետ պարզութեամբ, ամէն ինչ, այն ամէն ինչ խօսալու... Ի՛նչք, որ բաւականացած փոխադարձ սիրով վաղելում էք կեանքը՝ այն երջանիկ օրերը, որը մինչև մահ վըճուեցիք միասին անցկացնել... Ի՛նչք ընդունակ էք, կարողէք պահպանել ձեր ընտանեկան երջանկութիւնը, փրկեցէք և մերը... Այդ ժամանակաւոր շեղւիլը սրբազան պարտքի ճանապարհից չէ կա-

րող կորցնել իմ սէրը, իմ յարգանքը, իմ հաւատը գէպի նա...

Սարգսեանը դեռ երկար խօսակցեց տիկին Յովսէփեանի հետ, շերմօրէն համբուրելով նրա սառած ձեռիկները՝ խնդրեց նրան լինել իրենց մէջ միջնորդ հաշտութեան, և փրկել իրենց երկուսին էլ՝ անզարձ կորստից...

VI.

Տիկին Յովսէփեանը, լսելով Սարգսեանի աղերսանքը, գառնապէս տանջվում էր: Նրա գովասանքը, նրա համեմատութիւնը Մարգարիտայի և իր կնոջ մէջ, որից դուրս եկաւ այն, իբր թէ՛ նա իղէալի է կանանց,—պատառում էին նրա սիրտը: Մի քանի անգամ Մարգարիտան պատրաստեց գոչել «լուեցէք» և բոլորը, բոլորը խօստովանել ամուսնուն և Սարգսեանին, բայց մի տեսակ ստրկական—խայտառակ ամօթի և երկիւղի զգացմունք թուլացրեց բոլորովին նրա ուժերը և խօստովանութիւնը հանդաւ նրա սալտակացած շրթունքների վրայ: Երբոր Սարգսեանը երկար ու բարակ խօսակցելով ստացաւ Մարգարիտայից աղնիւ խօսք, որ կըզնայ վաղը Աշխէնի մօտ՝ դուրս գնաց մի քիչ քաջալերած և հանգստացած:

— Զահիլ կինը ազատօրէն շունչ քաշեց:

—Իմ թանգագին, իմ անուշիկ... սիրով վերաբերեց այ. Յովսէփեանը, դիմելով կնոջը, երբ նրանք սեղանատնից անցան ննջարան.—Ես որքան, պարտականեմ քեզ իմ բաղդաւորութեամբ: Եւ ճիշդ, մտնելով ամուսնական կեանքի մէջ, աղամարդը չի էլ մտածում, թէ ինչպիսի զարհուրելի քմահաճութեան է անձնատուր եղած, քմահաճութեան, որ գտնվում է իր կնոջ ափերի մէջ... Ահա քեզ Սարգսեանը—կենդանի մեռած մարմին: Նա այնքան էր սիրում զաւառական կեանքը, այնտեղի գործերը, այնքան սիրում էր Գ-ի հասարակական գործերին անձնատուր լինել, որ մոռանում էր իր «եսը», բայց ահա թէ ինչ.—նա, որպէս օգտակար, ազնիւ և հասարակական համարձակ գործիչ՝ դաւաճանում է իր իդէալը, երեսի վրայ է թողնում ամէն բան, միայն այն բանի սիրոյ համար, որ կնոջը ցանկալի էր խողալ այդպիսի մի ուսման... Հո՛ւ, լա՛ւ, եթէ որ նա համաձայնի նորից միանալ, իսկ եթէ ո՛չ... ես վաղուցվանից ճանաչումեմ Մակարին. նա ընդունակ է ընկղմել մեկամղձութեան մէջ և վատ վախճանով վերջ գնել իր կեանքին...

—Խեղճ մտրդ, ես այնպէս եմ խղճում նրան... և նոյնպէս Աշխէնին, լուռ շայնով շրջնչած Մարգարիտան:

—Ի հարկէ, խղճալի են... Սակայն ես լիովին հասկանում եմ նրա համոզմունքը և կարեկցում: Թող կինը դաւաճանէ ամուսնուն, միայն՝ եթէ այն-

բան անգորէ, որ չի կարող յալթել իր հրապուրանքը, բորբոքեած գազանային կերքը, բայց այդ նոր ճաշակով խոստովանանքը—այդ լիրբ արբմունքների, այդ աւերմունքները, սկանդալները... Սուկալի բաներ են: Եթէ ինձ, Աստուած մի արասցէ, պատահէր նոյնանման մի բան, ես ժամանակ էլ չէի կորցնիլ և մտածիլ ինքնասպանութեան վերայ... Ի հարկէ, Սարգսեանի ներկայութեամբ ասել այդ—կընշանակէր մղել նրան դէպ այդ յանցաւոր միտքը: Բայց այդ բանը լեզուիս ծալքին պտոյտ էր գալիս: Հագիւ զսպեցի ինձ—չ'արտայայտեցի... Այ՛ո, Սարգարիտա՛, մարդս այնպիսի ապերախտ անասուն է, որ սապալում է նրան, որը շնորհէլ է իրեն փառքի դափնիներ և միայն զղջում է անկման, կործանման ժամանակ... Ինձ համար այսօրուայ օրը մի փորձնական յաջող գաս է, և երանի թէ՛ այդ նոյն փորձնական դասը հարիւրաւոր մարդիկ տեսնէին կենդանի նկարագրութեամբ, այ՛ո տեսնէին, այն էլ—թատրոնական կրթիչ բեմի վրայ: Այսօրուայ խօսակցութիւնը Սարգսեանի հետ, նրա ողբալի գրաման, դու—քս կուրսերը—այդ ամէնը ինձ ուժգին կերպով վրդովեցին, և, որքան ինձ համար դառն է, բայց և այնպէս՝ պէտք է խօսեմ քեզ հետ պարզօրէն... միայն վաղօրօք խնդրումեմ քեզ՝ չբարկանալ, եթէ ես կասեմ միտքեւ անախորժ բան:

—Աստուած իմ, որպիսի յառաջաբան է, հա-

նաքով նկատեց Մարգարիտան, թէև նրա սիրտը մարում էր և ձայնը դողդողում.— Ինչ է պատահած կուրսերում, ինչ բան կարող է վերագրել ինձ:

— Ինձ համար այնքան անախտի՞ք է, Մարգարիտա, հաւատացիր ինձ, մանաւանդ Սարգսեանի խրատիչ պատմութիւնից չետոյ... Նա, ի հարկէ, ազդեց և քո նիարդերին, իսկ դու դեռ թէչից առաջ զգում էիր քեզ վրա: Ինձ ցանկալի չէ գառնութիւն պատճառել քեզ, բայց միւս կողմից, ես, որպէս ժամանակակից ամուսին, պարտական եմ նախազգուշացնել քեզ, նամանաւանդ... որ այստեղ ո՛չ միայն իմ անունն է պախարակվում, խախտաւակվում... այլ և՛ իմ հասարակական դիրքը...

Սա իմացայ, որ դո՛ւ... Սակայն չէ, այդ թողնենք վազան...

— Դո՛ւ ցանկանում ես ինձ սպանել, բնականից դուրս աղաղակեց Մարգարիտան,— առանձնապէս շատով, ինչո՛ւ ես տանջում ինձ... իմացա՞ր... ասիր, մի խնայիր...

— Բաւական է, բաւական, ահա ջուր, Մարգարիտա, խմիր և հանգստացիր... սոսկալի ոչինչ չըկայ... բանը նրանումն է, որ այսօր, երբ ժողովւած էինք Մ—ի մօտ, ասում էին, որ գտել են Ակադեմիայի սրահում բաց նամակներ, ուղղւած քո ընկերուհիներից մէկի հասցէին... Ահա թէ ինչո՛ւ ես ուզում եմ խնդրել քեզ, որ հեռու մնաս քո այդ ընկերուհիներից և չձգախիս դասախօսութիւն-

ներին, գոնէ մի երկու—երեք շաբաթ, մինչև որ ամեն ինչ կըհանգչի և մոռացութեան կըտուրի... Մարգարիտա, Մարգարիտա, ինչ պատահեց քեզ... Դու լո՞ց ես լինում, օգնեցէք, օգնեցէք,— ահուդսով աղաղակեց պ. Յովսէփեանը, զգալով թէ՛ ինչպէս թուլացած և սառնացած Մարգարիտան առանց զգացմունքի վայր ընկաւ նրա ձեռների վրայ, որը հազիւ կարողացաւ բռնել նրան: Կէս ժամից յետոյ Մարգարիտան հանւած, պարկած էր անկողնում, իսկ ամուսինը կանգնած նրա գլխավերևում, զունատւած և վրդովւած, երկիւղով նայում էր կնոջ դժգոյն երեսին, և մտքի մէջ լանդիմանում էր ինքն իրեն, որ ընտրեց այդպիսի անչարմար ժամանակ... Ինձ, տղամարդիս, բոլորովին շփոթութիւն պատճառեց Սարգսեանի պատմութիւնը, իսկ Մարգօլիս՝ այնպիսի ջղալին և տպաւորիչ նատուրալին,— նա կարող էր սաստիկ վրդովել... Ասում էր Յովսէփեանը— իսկ ես դեռ մտածեցի զլսիցս փչոցներ անել՝ խնդրել նրան՝ չըգնալ այնտեղ, չըպատահել ընկերուհիներին... Զարմանալի խելացիութիւն... Կարծես թէ՛ վաղը ժամանակ չէի գտնիլ... Եւ ինչո՛ւ այսքան ուշացաւ բժիշկը: Կեանքս կըտուրի, միայն թէ չըհիւանդանար իմ Մարգօս... Ախ, ինչպէս նա վերջին օրերս զունատւել է. քիչ էր ուտում, քնում... Յիշեց պ. Յովսէփեանը այն հողատարութեամբ, որպէս վայել էր սիրեցեալ ամուսնուն: Թէլի ժամանակ, Սարգսեանի պատմութեան

միջոցին, պ. Յովսէփեանը մի քանի անգամ իրան երևակայեց խաբւած և դէն շարտած ամուսին, պատկերացրեց թէ՛ ինչպէս Մարգօն, այն Մարգօն, որին այնչափ անսլայման հաւատում էր, որով անչափ, անհուն զմայլում և յափշտակվում էր— յանկարծակի ասէր նրան, որ սիրում է ուրիշին և գնում է նրա մօտ... և մահւան սարսուռը պատեց նրան: Ո՛չ, նրա համար աւելի լաւ էր մեռնել, քան թէ՛ կրէր այն անարգանքները և ստոր վարմունքները, որոնք ընկան Սարգսեանի վիճակախաղի տոմսին:

Ե՛ւ ճմարտութիւնը... ազնուութիւնը... անկեղծութիւնը... և ինչո՞ւ համար են դրանք, մինչգեռ ժամանակակից կանայք—նորաձև բօմանների հերոսուհիները հպարտանում, զուարթանում են այնպիսի ճմարտութեամբ և ազնուութեամբ, որոնք... վերդոված մտածեց պ. Յովսէփեանը, խիստ սեղմելով իրեն ձեռները... Ս՛, յաղթեցէք ձեր հրապուրանքներին, ձեր սանձարձակ Փանտաղիային, ձեր միառանձնատեսակ ազատ քաղղաւորութեանը, որն այնքան եռանդով որոնում էք: Յաղթեցէք և դրանով այն ժամանակ կ'ապացուցանէք ձեր ազնիւ յարաբերութիւնը՝ համաձայն ձեր տւած խօսքին, սրբազան պարտքին, որն ընդունեցիք ձեզ վրայ ինքնակամ և ազատաբար: Մեղադրելի չեն միայն դիւրական կանայք, որոնք բռնութեամբ են ամուսնանում... սակայն նրանք... նրանք հազար

անգամ ազնիւ են, քան թէ՛ դուք, դուք, կրթւած տիկիներ... Եւ եթէ դուք ուզում էք ձեր ընտրած ամուսինների հետ լինել հաւասար իրաւունքի տէր, բայց և այնպէս միք կործանիլ ձեր ընտանիքը մի վայրկենական հրճւանքի և տարփանքի համար, հաւասարակշռութեան մէջ դրէք ձեր կրքերն ու ընտանեկան, ամուսնական պարտականութիւնները: Փականք, արգելք դրեցէք ձեր դաւաճանութիւններին, անհաւատարմութիւններին, որոնք օրէց—օր աւելի զօրեղ կերպով խոր արմատներ են ձգում մեր գերդաստաններում, ամէն տեսակ ձևերով...

Ս՛խ, մարդիկ, մարդիկ, որպիսի սրբութեամբ հաւատում էք ընտանեկան բաղբաւորութեանը... և լիովին արժանի էք նրան, սակայն... Օ, ...— Պէտ այդ լաւ է, եթէ չըկան երեխաներ, չըկան այդ թշուառ արարածներն, որոնք առաջ են գալիս, որպէս անմեղ զոհեր, փոխադարձ սխալմունքների... Ինչ արած. քանի գնում, այնքան պակասում է հաւատարիմ ամուսնութիւնների թիւը: Օրէնքը, որը միացնում է մի ամբողջութեան մէջ երկու արարածներ, այլևս չունի իւր զօրութիւնը, ամուսնական կապի ամրութեան նկատմամբ: Ժամանակակից կեանքը առաջ է բերել այնքան բարդ հանգամանքներ, պատճառաբանութիւններ ամուսինների անջատման համար, որ մարդս սոսկում է, մոլորվում է, տեսնելով իւր օջախի հանգչումը և այդ ստիպողական, յարգելի երոյթները... և մարդս զգում

է իրեն, որպէս լողորդ փոթորկալից ծովակում, ծածկւած մակոյկի մէջ: Ի՞նչպէս ազատուել այդ օրհասական կորստից—ծովակի կլանումից: Ի՞նչով ապահովել իրեն, ինչպէս փրկել երեխաներին որբութիւնից...

Անբաղդ ամուսինը ուժասպառ վայր ընկաւ: Եւ այդ միջոցին լսելի եղաւ մի երգ, որն ակամայօրէն խլում էր մարդու աչքից արտասուքի կաթիլներ, մորմոքում էր մարդու սիրտն ու թոքը: Լսեց և Մարգարիտան... Այդ երգը սթափեցրեց, շփոթեց Մարգարիտային, այդ երգը, կարծես դիտմամբ էր երգվում, որ պատառ է նրա լերդն ու աղիքը, մի բուսեում հալումա՞յ անէ նրա կեանքը կամ առաջացնէ նրա մէջ խղճի և սրտի մաքրութիւն—զղջում... Ահա... Մարգարիտան ճանաչեց այդ ձայնը, այդ ծանօթ հնչիւնները—այդ Աշխէնն էր երգում, որն ապրում էր նրանց կից... Մարգարիտան ցնցւեց և վայր ընկաւ...

Ձանգակի սուր և կտրողական հնչիւնը վերջ տւեց պ. Յովսէփեանի մտածմունքներին և ստիպեց ցնցւել Մարգարիտային:—Ի՞նչ է այդ... Որտեղ եմ ես... Բնչ է պատահել... Երազ էր սո՛ւ արդեօք, խուլ ձայնով շշնջաց Մարգարիտան, խելքը գլուխը ժողովելով, և մի քիչ վեր բարձրանալով լինեց արմուկի վերայ.—Դո՛ւ այտեղ ես, հողիս, դիմեց Մարգարիտան ամուսնուն, քնքշօրէն սեղմելով նրա սրաղ ձեռները... Դու ինձ պարկեցրի՛ր... Օ՛, որպէս

բարի ես... շնորհակալեմ, շնորհակալ քեզնից... ների՛ր ինձ յանուն այն ամէնի, որունք ամէնից սուրբ են, թանգ են քեզ համար... Ների՛ր, ների՛ր, արտասանեց նա, ապուշ կտրած աչքեր լի կարեկցութեամբ և զղջումով կենտրոնացնելով ամուսնու դէմքի վրայ: Պ. Յովսէփեանը կարօտով և հիացմունքով դրկեց նրա ցաւած կուրծքը: Մարգարիտան ժպտաց և խճճւած ու քարշ ընկած մազերով գլուխը դրեց ամուսնու ուսերի վրայ...

—Բժիշկը եկաւ, շտապ ներս մտնելով ազդարարեց աղախինը: Գերասիմ Յովսէփեանը արագ քայլերով շտապեց դիմաւորելու: Մի քանի բուսեց յետոյ, երբ արդէն բժշկական հետազոտութիւնը վերջացած էր և նշանակւած մի ինչ որ դեղ՝ բժիշկը ներս մտաւ դահլիճը, ուր Յովսէփեանը, անհամբերութեամբ չափչափելով մի անկիւնից—միւսը, անհանդատութեամբ սպասում էր բժշկի վերջնական վճռին: Նրան թւում էր, թէ իր կինը տենդով տկար է և կանգնած է մահւան դագաղի կողքին: Եւ սառն քրտինքը հեղեղեց նրա ճակատը...

—Ի՞նչպէս է, պարոն բժիշկ, Բնչ դրութեան մէջ գտաք դուք նրան: Ի՞նչ տկարութիւն է, դողդողով հարցրեց նրան պ. Յովսէփեանը:

—Դատարկ բան է... Հինգ ամսից յետոյ հալը կըղառնաք... Ժպտալով նկատեց բժիշկը:

—Դուք... չէք սխալվում... կատակ չէք ա-

նում... դողողջիւն ձայնով հարցրեց Յովսէփեանը, զգալով ուրախութեան այնպիսի ջերմ հոսում, որ հազիւ դասեց իրեն—չըզրկել և չըհամբուրել այն մարդուն, որն աւետեց իրան այդ՝ իր երագների և յոյսերի պատկը:—Նա կրլինի շուտով հայր:

Յովսէփեանը ուրախ, կայտառ երեխայի նման ներս վազեց, անբնական և իրեն անյատուկ ձայնով աղաղակեց.—Ես բաղդաւորեմ, բաղդաւոր այսօրանից... Ներիր, ներիր ինձ, Մարգարիտա... Նա չըկարողացաւ շարունակել ընկաւ Մարգարիտայի կրծքի վրայ, կարօտակէջ, բուն սիրով սկսեց համբուրել... Մարգարիտան, որը խոր ընկղմած էր գառանցանքների մէջ, վեր բարձրացրեց հանգած աչքերը.—Ո՛հ, ի սէր Աստուծոյ, մի վրդովէք հանգստութիւնս... Սմուսինը համբուրեց և հեռացաւ: Կահաւորած ննջարանում տիրեց գերեզմանային, խաղալ լուսթիւն: Միայն Մարգարիտայի հոգեկան աշխարհն էր, որ անհանգիստ էր... Յուզվում էին գիշատիչ զղացմունքներ, խոնվում էին ծանր մըտքեր, ալէկոծվում էր նրա սիրտն ու հոգին... մի ներքին ձայն նրա մէջ «վրէժ, վրէժ» էր կանչում: Երկարատե լուսթիւնը ընդհատեց: Մարգարիտան ալլալլած, շփոթւած դէմքով, կայծակի արագութեամբ վեր թռաւ անկողնից և արձանացաւ հայելու առաջ: Նրա հոլանի կուրծքը տրոփում էր... շրթունքներն անգոր էին արտայայտել այն ամէնը, ինչ որ մի քիչ առաջ կատարել էր և կատարվում էր

նրա հոգեկան մթնոլորտում: Թուրացած ձեռները երբեմն շարժվում էին, կարծես թէ՛ հեռու էին քշում իրենցից անախորժ մտքեր... Երկար տատանմունքից յետոյ նա նկատեց հայելու մէջ երկու կուսական անարատ պատկեր, որոնք արտացոլել էին այնտեղ, և կարծես դիտմամբ, նրան աւելի տանջելու...

—Պատկեր սքանչելի, անբիծ... Օ՛, Աշխէն, Աշխէն... Գարշում և սոսկում եմ քեզնից... ինձնից... կորէք... հեռացէք... ինչո՞ւ էք այրում, խորովում սիրտս... բաւական չէ տանջանքներս... Չէ... չէ... արժանի եմ այդ անարգ վիճակին... Նա՛ կարծես ցնորեց: Տեսարանը փոխեց: Նրա առջև պատկերացաւ այ. Օհանեսներ իր դաժան դէմքով ու հոգով. նա սարսափեց, ուժգին ձայնով բացականչեց և ակամայ յետ փախաւ...—Օ, անիրաւ, անխիղճ, թունաւոր օձ... հեռացիր... կորիր գարշելի արարած... չէ... չէ... չեմ հաւատում... բաւական չէր... այժմ, այժմ... ո՛հ... չէ... չէ... Նա՛ մի փոքր հանդատացաւ, մեղմացաւ, լուրջ կերպարանք ստացաւ, կրկին մօտեցաւ հայելուն, կրկին շարունակեց.— Ինչո՞ւ, ինչո՞ւ կործանեցիր իմ կեանքս, անիրաւ... Գո՛ւ ինձ գրաւեցիր քո կեղծ հրապուրանքներով, դո՛ւ օրինակ բերելով «նրան» —գերեցիր իմ սիրտը, «նրան» որը իր բնաւորութեամբ մի հատիկ է ամբողջութեան մէջ... «Նա» —ցեխի մէջ խորասուզածին վեր բարձրացրեց, զրեց աւելի փայլուն և նա-

խանձելի դիրքի մէջ, քան թէ՛ էր իր նախկին խա-
տառակ ամուսնու մօտ: Հասարակական կարծիքը
առ ոչինչ համարեց, ջախջախեց, աներկիւղ ձեռք
մեկնեց իրեն սիրող սրտին, որը զոհեց իր կեանքը
<նրա> համար: Իսկ դ՛ու, դ՛ու թէ՛նչ արեցիր. թողե-
ցիր ինձ աղբի կոյտի մէջ, ոտնաքարը ձգեցիր ան-
դունդը, կործանեցիր, փշրեցիր, մաս—մաս արեցիր
այն սիրտն, որը զոհելով ամէն բան, անձնատուր
եղաւ քո լիրբ կրքերին... Եթէ դ՛ու, որի օրինակով
ինձ գերի դարձրիր և... ինձ... Եթէ <նրա> ազ-
նուութեամբ վարվէիր ինձ հետ, գուցէ և ես... Ս'...
ահեղ դատաստան... սէր է քո արգարութիւնը...
Կրկին տիրեց լուսթիւն...

— Խելքս թելադրում է ինձ անձնասպանու-
թիւն, իսկ խիղճս, խիղճս... անգթաբար պահան-
ջում է հանգստութիւն — մաքրութիւն... Ո՛չ...
խղճիս պահանջը արգարացի է, աղաղակեց Մարգա-
րիտան և սարսափահար ընկաւ յատակի վրայ, իսկ
անգորացած ձեռները վեր բարձրացան դէպի եր-
կինք, ակամայից խնդրելով զթութիւն և թողու-
թիւն...



... VII. ...

Անցաւ բժշկի ասայ ժամանակամիջոցը: Մար-
գարիտան ծանր տկարութիւնից յետոյ կազդուր-
վում էր: Երեխան, որի ծնունդը այքան մեծ ու-
րախութիւն պատճառեց հօրն, իր աշխարհ երե-
ւայուց յետոյ, մի քանի ժամ չանցած՝ մեռաւ:
Եւ այդ առաջին բաղդաւոր վայրկեանն էր Մարգա-
րիտայի կեանքի մէջ այն օրից սկսած, երբ իմա-
ցաւ, որ հինգ ամսից յետոյ լինելու է մայր:
Իր գործած մեղքերի խոստովանութիւնը, դա-
ւաճան վարմունքը ընդէմ ամուսնու, որին իսկա-
պէս ճանաչեց իր փրկութեան ժամանակ, — շատ
ծանր հետևանքներ թողեց նրա կեանքի վրայ:
Ամբողջ ժամեր և մինչև անգամ օրեր՝ Մարգարի-
տան անցնում էր մի տեսակ մռայլ անզգայութեան
մէջ, զարհուրանքով նայելով անցեալի վրայ՝ յան-
դիմանում էր ինքն իրեն և չարաչար զղջում:

Մարգարիտան լսելով մարդու ուրախալի խօ-
սակցութիւնը, տեսնելով նրա բաղդաւորութիւնը
և յոտը՝ իրենց որդու ապագայի նկատմամբ, —
անտանելի կերպով տանջվում էր: Շատ անգամ
զարհուրելի խոստովանութիւնը պատրաստ էր դուրս
թռչելու նրա շրթունքներից, սակայն զսպում էր
իրեն, հաշիւ տալով, որ իր պարգասութեամբ
ամուսնուն զժբաղդութիւն կըհասցնէ և վերջնա-
կանօրէն կըխորտակէ նրա կեանքը:

ձշմարտութեան զգացմունքը զաղտնի ասում էր Մարգարիտային, որ նա զեռ կարող է քաւել իր մեղքերը, հեռացնել իրենից իր բոլոր երեւակական ձգտումները դէպի անձնական բաղդաւորութիւնը, և յագեցնելով իր կեանքը օգտաւէտ գործունէութեամբ՝ կըստեղծէ մարդու համար խաղաղ և յարմար անկիւն, ուր նա, չարիքների դէմ կուելուց յետոյ, կարող է յոգնած, վատտակած և տանջւած հանգիստ գտնել—գտնել մաքառելու նոր ոյժ, հաւատ և խնդութիւն ու երջանկութիւն...

Ի ոլորովին կազդուրելով, նիհարացած, բայց մի տեսակ զմայլեցուցիչ, սքանչելի թարմութեամբ թէ հոգու և թէ դէմքի, լուսաւոր հայեացքներով դէպի կեանքը և մարդկութիւնը—նա՛ Մարգարիտան երևաց, որպէս տան բարի, գթառատ ոգին:

Իերասիմ Յովսէփեանը չէր կարող չ'ուրախանալ իր ընտանեկան բաղդաւորութեամբ. նա պաշտում էր կնոջը, և ամէն մի քայլափոխում օրինակ էր վերցնում նրանից, որը կարողացաւ այնքան եռանդով տանել անհուն վշտերն ու տանջանքները: Յովսէփեանի ծառայական գործերի վիճակը փոխւեց և հասաւ նախանձելի գրութեան: Նրան սկսեցին լուրջ գործեր յանձնարարել, և Մարգարիտան նկատեց, որ կարող է օգտակար լինել մարդուն, որպէս լաւ ընկեր, որպէս անձնուրաց, հաւատարիմ քարտուղար—և ուրախութեամբ ընդունեց այդ քաղցր ծանրութիւնը: Նա ամէնայն տոկունութեամբ և

եռանդով անձնատուր եղաւ ամուսնուն օգնելու գործում, և երբ վերջինս ստանում էր պարգև, գովասանք, որոնց Մարգարիտան կարգում էր լրագրներում կամ լսում էր ամուսնուց և բարեկամներից մեծ ցնծութիւն էին պատճառում նրա մաքրւած սուրբ սրտին: Նա աշխատում էր զիշեր և ցերեկ, և զգում էր, որ ինքն ևս ձգում է իր լուծան ընդհանուր վսեմ գործի գանձարանը, իր սիրեցեալ ամուսնու հետ ձեռք—ձեռքի տւած:



Այն, ինչ որ Օհանեսանի և նրա նման ժամանակակից հարիւրաւոր գիպլոմաւոր լովելասների աչքում կազմում է «Սիրոյ Պօէզիան», և ներկայացնում է կեանքի գրքի արտաքին գեղեցիկ երեսը, — ստեղծում է կնոջ կեանքում շատ ծանր, մուսլ գրամայ, վերջանալով ո՛չ միշտ ուրախ, այլ արիւնսահեղ տեսարաններով:

«Սիրոյ Պօէզիան» Մարգարիտայի առողջ և չքիչացած նատուրալի վրայ շատ կրթիչ կերպով ներգործեց և ընդ միշտ հեռացրեց նրան այդ որոնելուց:

Գործունիալ և սիրելի Մարգարիտան տեսաւ և կեանքի պրօզայում պայծառ ճառագայթներ—լինել օգտակար տնտես կին, ազնիւ, հաւատարիմ կին, մտերիմ ընկեր ամուսնուն—և այս մի այնպիսի գա-

դափարական գրութիւն է, որ անմատչել է այն
 էգոիստներին, որոնք ձգտում են անձնական բազ-
 դաւորութեան, կործանելով և ոչնչացնելով ուրիշի
 կեանքը, երևակայելով կառուցանել ամպերի վրայ
 իրենց սրբութեանց սրբոց: Խորաններն ու տա-
 ճարները...



...անուրեւնում ազնւորութեամբ զոհուած զոհ...
 ...հոգեւորականութեան զարգացումը...
 ...սոցիալական կարգի փոփոխումը...
 ...մարտնչական ոգի...
 ...հայրենասիրական զգացում...
 ...հասարակական կարգի պահպանում...
 ...հայրենասիրական զգացում...
 ...հայրենասիրական զգացում...
 ...հայրենասիրական զգացում...

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏՐՈՒՍ Է ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՊԱՓԱՔԱՔԱՆԱՆ ՕՐԻՈՐԿ

Վէպը

Եւ լոյս կը տեսնի մի խումբ օրիորդների
Հրատարակութեամբ

ՆԱԵՒ ՊԱՏՐՈՒՍ ԵՆ.

- 1, Հասարակաց Աղջիկը:
- 1, Նարգիզ-Գիւլօ:
- 3, Զրոյցներ բ. տետր:

ԳԻՆՆ Է 20 Կ.

Վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոց-
ներում:

Հինգ ըուբլուց աւել գնողներին 20 տոկոս զի-
ջում կը լինի:

Մեր հասցէն՝ Тифлисъ. Книжный магазинъ
Хидикель, յանձնել Ա. Տէր. Սիմէօնեանցին:

2013

